ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՂՁԱՆՔԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՄԻՋԵՎ

ԼՈՒՍԻՆ ՇԱԲՈՅԱՆ

Անկախությունը բաղձանքի և իրականության միջև. ազգային անկախության մշակութային վերապատկերումները Հայաստանի առաջին հանրապետությունում

ԵՐԵՎԱՆ 2023

Նախաբան

Հետազոտական աշխատանքը Առաջին հանրապետության ազգային անկախության ըմբռնումների ու դրանց մշակութային վերապատկերումների վերլուծություն է: Այսօր Հայաստանի անկախ պետականությունը շուրջ երեսնամյա փաստացի իրողություն է՝ թեև մարտահրավերներով ու անխուսափելի վտանգներով լի, սակայն անկախության ու պետականության մասին մեր ըմբռնումները մնում են նախկինում ձևավորված քաղաքական մտածողության շրջանակում: Կայանալով մեծապես ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում՝ հայ քաղաքական միտքն անկախ պետականությունը օժտել է գլխավորապես սրբազան գաղափարի կարգավիճակով ու հանդես բերել այն որպես բաղձալի նպատակ: Արդյունքում մեզանում պետությունը, հակառակ ժողովրդի համար բարեկեցություն ապահովելու ու կյանքը գործնականում ապրելի դարձնելու իր բուն նպատակին, մեծապես կապվել է հավաքական փրկագործման նվիրական գաղափարի ու կյանքից վեր դասված բարձր արժեքների համար նահատակության գնալու ոգեկոչման հետ, մի իրողություն, որ, ինչպես կտեսնենք ստորև, ընկած էր նաև Առաջին հանրապետության կայացման գաղափարական հիմքերում: Թեև հայ ժողովրդի բարեկեցության ու զարգացման նպատակն ինչ-որ առումով եղել է նաև Առաջին հանրապետության ղեկավարների քաղաքական օրակարգում, այդուհանդերձ, դրանք կյանքի կոչելուն միտված ձևերը մի իմաստով դեմ են գնացել մշակութային այն դրվածքին, որով ապրել է ժողովուրդն իր առօրյա կյանքում: Այսպես, Առաջին հանրապետությունում քաղաքական միտքը կայացել է՝ ելնելով ոչ այնքան ժողովրդին իր ներհակությամբ ու առօրյա վարքուբարքով ըմբռնելու, որքան ի հակառակ դրանց՝ ժողովրդին դեպի անկախության վեհ գաղափարները բարձրացնելու քաղաքական հրամայականից: Արդյունքում Առաջին հանրապետությունում անկախության գաղափարը քաղաքականապես սրբացվել է՝ հակադրվելով ինչպես առկա նյութական պայմաններին, այնպես էլ ժողովրդի իրական կյանքը հնարավոր դարձնող կենսաձևերին:

Այսօր ազգային պետականության կայացման ճանապարհին Հայաստանում հարկ կա վերանայելու անկախ պետականության մասին մեր ըմբռնումները ու այդպիսով հասկանալու այն ոչ միայն բաղձալի բարձր նպատակների, այլ նախևառաջ ապրվող կյանքի հակասությունների միջով: Այս հակասություններն են, որ մենք կփորձենք շոշափել Առաջին հանրապետությունում ազգային անկախության ըմբռնումների ու դրանց մշակութային վերապատկերումների քննարկմամբ, հակասություններ, որոնք իրենց գեղարվեստական մարմնացումն են ստացել նաև Առաջին հանրապետության պետական խորհրդանշանների՝ դրոշի, զինանշանի, թղթադրամների, նամականիշների ու փոստային բացիկների նկարչական ձևավորումներում:

Առաջին հանրապետությունում ազգային անկախության ու գործնական կյանքում դրա հարուցած լարումներին հետազոտության ճանապարհին անդրադարձել ենք պատմական կոնկրետ դրվագների՝ Անդրկովկասում ազգային անկախ պետականությունների ծնունդին նախորդած քաղաքական նախադրյալների, հետանկախացման շրջանի Հայաստանում սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրադրության, կոալիցիոն կառավարության ձևավորման, 1919-ին Երևանում բացված Հայ արվեստագետների միության առաջին ցուցահանդեսի և Հայաստանի անկախացման միամյա տարեդարձի առթիվ թողարկված փոստային բացիկի քննությամբ: Երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական այս համատեքստին անդրադառնալը կարևորում ենք, սակայն, ոչ իբրև մեր նյութը ձևավորող զուտ պատմական փաստերի ներկայացման, այլ նախևառաջ մեր հետազոտության

հիմնական առանցքը կազմող անկախության մշակութային վերապատկերումները քաղաքական ու մշակութային առավել լայն հետագծի մեջ դիտարկելու ու այդպիսով՝ պատմական համատեքստի ու պատկերի միջև եղած ներքին բարդ կապերը բացահայտելու տեսանկյունից:

Հարկ է նշել, որ Առաջին հանրապետության քաղաքական ու կրթամշակութային կյանքն իր տարբեր կողմերով, եղել և առ այսօր շարունակում է մնալ ինչպես սփյուռքյան, այնպես էլ հայաստանյան գիտնականների ուշադրության կենտրոնում: Ավելին՝ Առաջին հանրապետության քաղաքական ղեկավարները, նախընթաց շրջանի իրենց գործունեությանը գալիք սերունդներին հասու դարձնելու ցանկությամբ տոգորված, իրենք իսկ ձեռնամուխ են եղել հանրապետության պատմությունը լուսաբանելուն: Փաստագրական այս նյութերին միանգամայն արժանին մատուցելով հանդերձ՝ Առաջին հանրապետության քաղաքական ու մշակութային կյանքի պատմությունն ուսումնասիրելիս մենք, այդուհանդերձ, կանգնել ենք բարդ մարտահրավերների առջև նախևառաջ այն պարզ պատճառով, որ Առաջին հանրապետությունն ինքը ունեցել է ընդամենը երկուսուկես տարվա կյանք: Ուստի մեզնից մեծ ջանք և նրբանկատություն է պահանջվել հակասություններով լի այս շրջանի քաղաքական ու մշակութային, ըստ էության, չափազանց կարճատև կյանքի պատմությունն անաչառ կերպով գնահատելու համար: Այս անկյան տակ հարկ է նկատել, որ Առաջին հանրապետության մշակութային կյանքը պատմաբանները հիմնականում դիտարկել են կիսակատար ձեռնարկների անկյան տակ՝ ընթանալով միայն Առաջին հանրապետության գեղարվեստական ու կրթամշակութային իրադարձությունների ժամանակագրական թվարկման ճանապարհով: Արարատ Աղասյանը, օրինակ, իր՝ *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում* աշխատության մեջ գրում էր.

> 1918-ի մայիսի 28-ին հռչակված Հայաստանի Առաջին Հանրապետությունը կարճատև պատմություն ունեցավ: Միանգամայն բնական է, որ քաղաքական, սոցիալական և տնտեսական ծանր պայմաններում հայտնված նորաստեղծ երկրի ղեկավարությունը հիմնականում մտահոգված էր պետական անվտանգությունն ապահովելու և ժողովրդի կենսական կարիքներն ու պահանջները բավարարելու հրատապ խնդիրներով: Մշակութային կյանքի հետ կապված հարցերը հետաձգվում կամ արմատական լուծում չէին ստանում:[1]

Թեև այս գնահատականն իր մեջ պարունակում է օբյեկտիվ ճշմարտություն այն իմաստով, որ Առաջին հանրապետությունում մշակութային կյանքի զարգացումն էապես տուժում էր պետության նյութական սուղ ռեսուրսների պատճառով, այդուհանդերձ, մեր համոզմամբ, սոցիալ-տնտեսական ու քաղաքական թեկուզև այս անմխիթար պայմաններում ձևավորվել են կոնկրետ հարացույցներ, որոնք ժամանակագրական թվարկումից անդին, պատկերացում են տալիս, թե քաղաքական ինչպիսի հեռանկարում էր կայանում մշակույթն Առաջին հանրապետությունում:[2] Սա է պատճառը, որ Առաջին հանրապետության քաղաքական ու մշակութային կյանքի վերաբերյալ մեր գնահատականները առաջադրելիս նախևառաջ հիմնվել ենք պատմական

---

[1] Արարատ Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում* (Երևան: Ոսկան Երևանցի, 2009), էջ 75:

[2] Առաջին հանրապետության կրթամշակութային կյանքին առնչվող ուսումնասիրությունների համար տե՛ս Գուրգեն Վարդանյան, *Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում (1918-1920 թթ.)* (Երևան: Գիտություն, 2003); *Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին* (*Գիտաժողովի նյութեր*, Երևան, 2018); Արթուր Ավագյան, «Հայաստանի առաջին հանրապետության մշակութային կյանքի պատմությունից», *Բանբեր* հայագիտության, 2018, թիվ 2, էջ 159-167; Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, էջ 75-77:

սկզբնաղբյուրների վրա: Մեզ համար առանցքային կարևորություն են ունեցել ինչպես Առաջին հանրապետության ղեկավարների հուշագրությունները, այնպես էլ ժամանակի մամուլում, ինչպես օրինակ՝ *Աշխատանք, Ժողովուրդ, Յառաջ, Հայաստանի աշխատաւոր, Էջմիածին* և այլ պարբերականներում տեղ գտած նյութերը:

Անկախության հաստատման քաղաքական նախադրյալները

Ներկայիս Հայաստանի տարածքում ազգային անկախ պետականություն ունենալու գաղափար չի եղել ոչ դարադարձին ձևավորված հայ ազգային կուսակցությունների օրակարգում և ոչ էլ ժողովրդական լայն խավերի մտահորիզոնում: Ինքնուրույն հասարակական-քաղաքական կյանքի բաղձանքները մեծապես կապվել են «Երկրի»՝ Տաճկաց Հայաստանի ազատագրության հետ: Ինչպես նշում է դաշնակցական գործիչ, Առաջին հանրապետության ղեկավար դեմքերից Ռուբեն Տեր-Մինասյանը.

> ....ոչ մի հայ կուսակցութիւն բնաւ չէ ձգտած Երեւանեան նահանգը բաժանել Ռուսաստանից եւ նրանից կազմել Հայաստանը: Հայ կուսակցութիւնները եւ առհասարակ հայ ժողովուրդը ձգտած են ունենալ անկախ Հայաստան, բայց ոչ թէ Ռուսաստանում, այլ ռուսական սահմանից այն կողմը, Տաճկաց Հայաստանում:[3]

Եվ այդուհանդերձ 1918-ի մայիսին ոչ թե Արևմտյան, այլ Արևելահայաստանի սահմաններում է, որ շատ առումներով հարկադրաբար պետք է հռչակվեր Հայաստանի առաջին հանրապետությունը: Առաջին աշխարհամարտի՝ 1917-1918 թվականների զարգացումները տարածաշրջանում քաղաքական բեկման և ազգային անկախություններին նախորդած առանցքային գործոններ պետք է նկատել:[4] Այսպես, մի կողմից, Ռուսաստանի խորհրդայնացումից և Անդրկովկասից ռուսական ուժերի նահանջից հետո առաջնային դարձավ տեղական ազգությունների՝ հայերի, վրացիների ու ադրբեջանցիների շահերը ներկայացնող գործադիր մարմնի՝ Անդրկովկասյան կոմիսարիատի և օրենսդիր մարմնի՝ Սեյմի կազմավորումը: Մյուս կողմից՝ Թուրքիայի քաղաքական անհաջողություններն արևմուտքում շրջեցին վերջինիս հետաքրքրությունն Անդրկովկասի, այդ թվում՝ Ռուսահայաստանի ուղղությամբ: Անդրկովկասի հետ միայնակ բանակցելու Թուրքիայի պահանջն առաջ բերեց 1918-ի ապրիլին Անդրկովկասյան Դաշնակցային անկախ հանրապետության հռչակումը, հանրապետություն, որին մոտ մեկ ամսվա կյանք էր վիճակված. Թուրքիայի տարածքային պահանջների հետևախորքին Անդրկովկասյան կառավարության մեջ մտնող ազգային կուսակցությունների ծայրահեղ հակասություններն ու քաղաքական միանգամայն տարբեր նկատառումները 1918

---

[3] Ռուբէն, *Հայ յեղափոխականի մը յիշատակները*, հ. 7 (Թեհրան: Գ., 1982), էջ 126: Այս առումով թերևս բացառություն էր կազմում Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության նախնական ծրագիրը, որում թեև դրված էր Արևելյան Հայաստանի անկախության խնդիրը՝ կազմված Թուրքահայաստանի, Պարսկահայաստանի և Ռուսահայաստանի շրջաններից, այնուամենայնիվ, այն հանդես էր գալիս որպես հեռավոր նպատակ, այլ ոչ թե առաջնային խնդիր:

[4] Հայաստանի անկախացմանը նախորդած քաղաքական իրադարձություններին մանրամասն անդրադառնում է պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանն իր՝ Հայաստանի Հանրապետության երկուսուկեսամյա պատմությանը նվիրված քառհատոր մեծածավալ աշխատության առաջին հատորում: Տե՛ս Ռիչարդ Հովհաննիսյան, *Հայաստանի Հանրապետություն*, հ. 1 (Երևան: Տիգրան Մեծ, 2005), էջ 1-40, ինչպես նաև Richard Hovannisian, *Armenia on the road to independence 1918* (Berkeley: University of California press, 1967):

թվականի մայիսի 26-ին Սեյմի լուծարման և Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի անկախացման պատճառներ հանդիսացան:[5]

Ազգային անկախությունների՝ մի իմաստով ռազմաքաղաքական հանգամանքների բերումով հռչակված լինելու իրողությունն էր թերևս նաև պատմաբան Լեոյի մտքում, երբ անկախության մասին իր հուշերում նա ամենևին ոգևորությամբ չէր խոսում անկախ պետականությունների ծնունդի և մասնավորապես Հայաստանի Հանրապետության մասին: Լեոյի բնորոշմամբ «անկախ չէր անդրկովկասյան հանրապետություններից եւ ոչ մեկը, բայց Հայաստանի «անկախությունը» ոչ մեկին նման չէր»:[6] Լեոյի՝ ազգային արժանապատվությունն ամենևին չշոյող այս տողերում, այդուհանդերձ, կա օբյեկտիվ ճշմարտություն: Ի տարբերություն Հայաստանի, որը վերջինիս ղեկավարներից Նիկոլ Աղբալյանի խոսքով «մնացած էր մինակ, ինքն իրեն հետ», Վրաստանն ու Ադրբեջանը նախապես հող էին հարթել անկախության համար՝ ի դեմս Գերմանիայի ու Թուրքիայի շահելով քաղաքական իրենց հովանավորներին:[7] Պատահական չէ, ուրեմն, որ օրինակ՝ Թիֆլիսում հրատարակվող ՀՅԴ օրգան *Հորիզոնի*՝ 1918 թվականի մայիսի 28-ի համարում տպագրված «Վրաստանի անկախութիւնը» վերտառությամբ հոդվածում հեղինակը Վրաստանի անկախանալը դիտարկում է ոչ իբրև «հարկադրական» որոշում, այլ «միանգամայն համապատասխան» վրաց ժողովրդի «իրական շահերի պաշտպանությանը».

> Վրաստանը յայտարարուած է անկախ պետութիւն: Սա մի վճռական քայլ է վրաց ժողովրդի կողմից, բայց ոչ հարկադրական, արտաքին ճնշման տակ կատարուած մի ակտ, այլ միանգամայն համապատասխան ժողովրդի ընդհանուր տրամադրութեան, և նրա ղեկավար մարմինների և յեղափոխական կուսակցութիւնների ազատ կամքի արտայայտութիւնն է: Այդպէս են հասկանում նրանք իրենց ժողովրդի իրական շահերի պաշտպանութիւնը, և անկախութիւնը համարում են ներկայ մոմենտի հրամայական պահանջ:[8]

Այսպես, եթե ինքնուրույն պետականության կորստից հետո հայ քաղաքական միտքը Իսրայել Օրիից ի վեր տոգորված է եղել կորսված պետականությունը վերականգնելու բաղձանքով, ինչն էլ հայկական ինքնուրույն պետականության գաղափարը օժտել է մի

---

[5] Այն, որ Անդրկովկասյան կառավարությունն իր ստեղծման օրից իսկ դատապարտված էր լուծարման ազգային կուսակցությունների հակամարտ ձգտումների պատճառով, փաստում է նաև Առաջին հանրապետության երկրորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը. «Դժբախտաբար կոմիսարիատի մէջ մտած կուսակցութիւններն ու անձերը հակամարտ ձգտումներ, զգացումներ ու օրիէնթացիներ ունէին,- բան մը, որ երևան եկաւ առաջին օրերէն իսկ: Հայերը կ' ուզէին պահպանել Տաճկահայաստանը իրենց համար. թաթարները կ' ուզէին վերադարձնել զայն Տաճկաստանին. իսկ վրացիները կ' ուզէին խաղաղ եւ բարեկամական յարաբերութիւններ հաստատել տաճիկներու եւ թաթարներու հետ»: Տե՛ս Ալեքսանդր Խատիսյան, «Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը», Հայրենիք, 1924, թիվ 4, էջ 109:
[6] Լեո, *Անցյալից* (Երևան: Շեմ, 2009), էջ 376:
[7] «Մայիս 28-ը Աղեքսանդրիոյ մէջ. Բանախօսութիւն ընկ. Աղբալեանի», *Յուսաբեր*, 7 հունիսի 1924 թ.:
[8] «Վրաստանի անկախութիւնը», *Հորիզոն*, 28 մայիսի 1918 թ.: Այն, որ ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանի ու Վրաստանի անկախությունը դիտարկվում էր իբրև նախևառաջ իրենց իսկ ժողովրդի բարօրության ու երջանկության հաստատման նախապայման կարդում ենք նաև *Մշակի* էջերում. «Վրաստանի և Ադրբէյջանի անկախութիւնը նրանց համար գուցէ բերի երջանկութիւն, բայց մեզ համար Հայաստանի անկախութիւնը՝ ոչ»: Տե՛ս Հ. Ա., «Հայկական անկախ իշխանութիւն», *Մշակ*, 5 հունիսի 1918 թ.: Ավելորդ չէ հիշատակել նաև հենց հայ և վրաց քաղաքական վերնախավի ներկայացուցիչների՝ Ալեքսանդր Խատիսյանի և Նոյ Ժորդանիայի միջև՝ Վրաստանի անկախացմանը նախորդած խոսակցության մի դրվագ: Դաշնակցական գործչի այն հարցին, թե ինչպես է, որ վրացիները, հայերի հետ «միասին պատերազմի մէջ» գտնվելով, Վրաստանի անկախության հռչակմամբ փաստացիորեն «լքում» են հայերին, ժորդանիան պատասխանում է. «Ազնիւ բան է այն, ինչ որ օգտակար է ժողովուրդին»: Տե՛ս Խատիսյան, «Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը», *Հայրենիք*, 1924, թիվ 10, էջ 129:

յուրատեսակ սրբազնությամբ, ապա 1918-ի դրությամբ Աղբալյանի խոսքով՝ «Հայաստանի մէջ ոչ ոք կ'ուզէր կամ կ'երազէր անկախութիւնը»:[9] Նա հավելում է. «Գիտէինք որ անիկա հայ ժողովուրդը դէպի Գողգոթա պիտի առաջնորդէր»:[10] Քաղաքական բաղձանքի և գործնականում դրա իրականացման միջև եղած այս հակասությունը մի իմաստով պայմանավորված էր նրանով, որ Անդրկովկասի հայերը քաղաքականապես ու մշակութայնորեն կապված լինելով Ռուսաստանի, իսկ ավելի ուշ՝ Անդրկովկասյան Դաշնակցային հանրապետության հետ, օբյեկտիվորեն պատրաստ չէին ազգային ինքնուրույն կյանքին: Արդեն վերը հիշատակված «Վրաստանի անկախութիւնը» հոդվածում հեղինակը ցավով է նշում հայերի և հարևան ազգերի միջև՝ ազգային անկախությունների հռչակմամբ առաջ եկած բաժանման մասին. «Շատ ծանր է մեզ հայերիս համար, որ խզելով մեր կապը ընդհանուր ռուսական դեմոկրատիայից, այսօր էլ փաստորէն կտրուած ենք և մեր հարևան դեմոկրատիայից...»:[11] Եվ ուրեմն ազգային «ինքնուրույն քաղաքականության» և սեփական բախտը «մեն-մենակ տնօրինելու» խնդիրն էր, որ չարագուշակ ահազանգ էր դարձել անկախացման օրերին: Սա է նաև պատճառը, որ անկախության հռչակումը միանշանակ չէր ընկալվում հայ քաղաքական կյանքում: Անկախությունը շատերի կողմից դիտարկվում էր «վնասակար .... հայ ազգի շահերի տեսակետից»՝ դրա հռչակումը միայն «հեռաւոր ապագային» վերապահելով:[12] Այսպես օրինակ *Մշակի*՝ 1918 թվականի հունիսի 5-ի համարում կարդում ենք. «Մեզ թւում է, որ հայկական անկախ իշխանութիւն կամ հանրապետութիւն ստեղծելու միտքը և՛ վաղաժամ է և՛ աննպատակայարմար, որքան և նա շոյիչ համարվի անհաւասարակշիռ մտքի տէր մարդկանց համար»:[13] Եվ միայն Թուրքիայի քաղաքական վերջնագրի պատճառով, ըստ որի՝ նա կբանակցեր միայն անկախ հանրապետությունների հետ, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդն ի վերջո ՀՅԴ գործիչներ Հովհաննես Քաջազնունուն, Ալեքսանդր Խատիսյանին ու Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Միքայել Պապաջանյանին լիազորում է Բաթումում Թուրքիայի հետ Հայաստանի անունից բանակցելու և հաշտություն կնքելու:[14] *Մշակի*՝ հունիսի 2-ով թվագրվող «Քաղաքական դրութիւնը» վերտառությամբ հոդվածում հեղինակը հայկական կողմի՝ «որոշ զիջումներ և վերապահումներ» անելու անխուսափելիությունը կապում էր հենց հայերի՝ քաղաքական «հովանաւոր» չունենալու հանգամանքի հետ. «Եւ մենք հայերս ստիպված ենք այդ անել, որովհետև մենք չունենք ոչ մի հովանաւոր և օգնական, ոչ մի համակրող....»:[15] Հունիսի 4-

---

[9] «Անկախութեան տօնը եգիպտահայ գաղութին մէջ. Ընկ. Ն. Աղբալեանի ճառը», *Յուսաբեր*, 2 հունիսի 1925 թ.:
[10] «Անկախութեան տօնը եգիպտահայ գաղութին մէջ. Ընկ. Ն. Աղբալեանի ճառը»:
[11] «Վրաստանի անկախութիւնը»:
[12] Հ. Ա., «Հայկական անկախ իշխանութիւն»: Հետաքրքրական պետք է նկատել թերևս առ այսօր քիչ հիշատակվող փաստը, որ որպես այլընտրանք անկախությանը՝ հայության շրջանակներում եղել են նաև Հայաստանն Ադրբեջանի հետ միացնելու քաղաքական տեսակետներ: *Մշակում*, օրինակ, կարդում ենք. «Ենթադրութիւն և առաջարկ կայ ոմանց կողմից, որ Հայոց Ազգային Խորհուրդը հրատարակէ մնացած հայկական գաւառամասերը իբրև անկախ և դառնայ կամ կազմէ մի ժամանակաւոր կառավարութիւն, կայ կարծիք, որ աւելի լաւ է համաձայնութեան գալ մեր հարևան թաթարների հետ և միանալ Ազրբէյջանի հետ, կայ երրորդ կարծիք՝ թողնել այդ գաւառամասերը իբրև նախկին Ռուսաստանի մասն»: Տե՛ս «Թիւրքական ուլտիմատումը», *Մշակ*, 31 մայիսի 1918 թ.; Հ.Ա., «Սպասելի հետեւանքները», *Մշակ*, 31 մայիսի 1918 թ.; Հ. Ա., «Հայկական անկախ իշխանութիւն»:
[13] Հ. Ա., «Հայկական անկախ իշխանութիւն»:
[14] Կարևոր է նկատի առնել, որ անկախության հռչակման հարցի շուրջ քննարկումներում Դաշնակցություն կուսակցության ղեկավարներն իրենք «վարանումի մէջ» էին «նախապէս»: Այն, որ անկախությունն այսօր մեծապես նույնացվում է Դաշնակցության անվան հետ, ըստ էության, ավելի ուշ՝ 1920-ականներին ազգային կոմունիստների և դաշնակցականների միջև ծավալված և ստալինացմամբ սրված քաղաքական բանավեճերի արդյունք է: Մինչդեռ օրինակ՝ Նիկոլ Աղբալյանը նշում է. «.... այդ սրբազան գաղափարը դաշնակցական մակդիրով կ'որակեն: Ասիկա պատիւ է մեզի համար, ոչ մէկ կասկած: Բայց չմոռնանք որ յափշտակութիւն կը կազմէ ան, եթէ յիւրացնենք մենք. այո՛ մենք վարեցինք այդ գաղափարի պայքարը, մենք տքնեցանք, մենք տառապեցանք եւ թանկագին զոհեր տուինք ու կը շարունակենք տալ. բայց մենք եղանք միայն վարիչ ու արտահայտիչ, պատմութեան անօթն ու գործիքը»: Տես «Անկախութեան տօնը Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Հալլէպի եւ Երուսաղէմի մէջ. Ընկ. Ն. Աղբալեանի ճառը», *Յուսաբեր*, 4 հունիսի 1925 թ.:
[15] «Քաղաքական դրութիւնը», *Մշակ*, 2 հունիսի 1918 թ.:

ին կնքված հաշտության պայմանագրի համաձայն՝ Հայաստանին էր տրվում շուրջ 10000 կմ² տարածություն: Եվ հենց այս սահմաններում պետական կյանքի ու ժողովրդի զարգացման հնարավորության հարցն էր, որ դրվում էր անկախության կայացման հիմքերում: Հայ Ժողովրդական կուսակցության հիմնադիր Համբարձում Առաքելյանն այս առթիվ հարց էր բարձրացնում.

> …. Արդեօք այն տարածութեան վրա, որ դեռ ենթադրվում է թողնել մեզ, այն է մօտ 11000 քառ. վերստ՝ մոտ 400 հազար հայ և 100 հազար մուսուլման բնակչութեամբ հնարաւո՞ր է ունենալ պետական կեանք, հնարաւո՞ր է հայ ժողովրդի համար ապրել և զարգանալ, թէ՞ այդ տարածութիւնը ներկայացնում է մի անպտղաբեր և անարժէք հող, որի վրա ոչ մի կուլտուրական, մշակութային կեանք հնարաւոր չէ:[16]

Մայիսյան հերոսամարտերը՝ ազգային անկախության հիմքերում

Անկախ պետականության հաստատման համար առանցքային նշանակություն ունեցան նաև մայիսյան վերջին օրերին Ղարաքիլիսայում, Բաշ-Ապարանում և Սարդարապատում թուրքական բանակի դեմ տարերայնորեն ոտքի ելած հայ ժողովրդի կենաց-մահու կռիվները, որոնք կասեցրին դեպի Երևան թուրքական բանակի առաջխաղացումները: Այդ պայքարն ի վերջո հենց Առաջին հանրապետության տարիներին դիտարկվեց իբրև «ամենահիրական հիմքն …. մեր այսօրուան անկախութեան»:[17] Ազգային մեծ աղետից հետո ռազմաճակատում հայկական կողմի հաջողությունները, հանդես գալով որպես հայ ժողովրդի գոյատևման առհավատչյա, միաժամանակ ապահովեցին հայության՝ անկախ պետականության մեջ ապրելու իրավունքը: Վերացման վտանգի պահին, երբ «ելք չկար», ելքը՝ «դիմադրութիւնն էր, կռիվը», հանուն «մեծ գործի՝ հայրենիքի փրկութեան» սրբազան գաղափարի համար հավաքական նահատակության գնալու «հերոսական ոգեկոչումն» էր, որ դրվում էր այս պայքարի հիմքում:[18] Պատահական չէ ուրեմն, որ օրինակ՝ մայիսյան հերոսամարտերի օրերին ռազմաճակատում իրադրությունը լուսաբանող *Հորիզոն* թերթի հոդվածներից մեկում հեղինակը, միանգամայն վստահ մարտերում հայկական կողմի «լիակատար» հաջողության վրա, միաժամանակ հավելում էր. «Վերջնական յաղթութեան յոյսը չէ, կարծում ենք, որ առաջնորդում է մեր ժողովրդին, այլ կռւով ու պատւով մեռնելու ցանկութիւնը»:[19] Այսպես, ազգային անկախության հիմքում դրվում էր կյանքից վեր ըմբռնված բարձր արժեքի՝ հայոց պետականության համար նահատակության գնալու սրբազան գաղափարը, գաղափար, որն իր կրոնա-մշակութային ակունքներն ուներ վաղմիջնադարյան՝ ֆիզիկական գոյությանը հակառակ հոգևոր խոյանքով ապրելու՝ քրիստոնեությամբ սկզբնավորված և Ավարայրով քաղաքականապես ամրագրված Հայ առաքելական եկեղեցու ավանդույթի մեջ:[20] Ուրեմն ազգային անկախությունը, կտրվելով պետական ու հանրային կյանքը հնարավոր դարձնող նյութատնտեսական պայմաններից,

---

[16] Հ. Ա., «Հայկական կառավարութիւն», *Մշակ*, 1 հունիսի 1918 թ.:
[17] Գ. Շահինեան, «Հերոսական շաբաթը», *Հայաստանի աշխատաւոր*, 28 մայիսի 1919 թ.:
[18] Տես Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն (Երեւան: Անտարես, 2018), էջ 163-169:
[19] «Մեր կացութիւնը», *Հորիզոն*, 30 մայիսի 1918 թ.:
[20] Հոգևոր գաղափարի համար հավաքական նահատակության գնալու՝ հինգերորդ դարում Եղիշեի սահմանադրած կրոնաեկեղեցական իդեալի քաղաքական վերհառնեցման դեպքերը 19-րդ դարի հայերի արդիացման ու ազգային պետության կայացման ճանապարհին քննարկում է Նարե Սահակյանն իր «*Ավարայրի ճակատամարտը՝ պետության հիմքում. հայ գրագետի սուրբն ու ժողովրդի դյուցազունը*» հետազոտության մեջ: Տես *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, ըստ՝ https://shorturl.at/hmrQ2, այց՝ 4 հոկտեմբերի 2023 թ.:

քաղաքականապես սրբացվում էր՝ կապվելով կորսված ազգային ազատության վերականգնման ու հավաքական փրկագործման նվիրական գաղափարի հետ, գաղափար, հանուն որի պետք էր մաքառել ու նահատակվել: *Հայաստանի աշխատաւոր* թերթում կարդում ենք.

> Այսօր.... հայ ժողովուրդը ազդարարում է ի լուր ամենքի, որ նա շատ թանգ է գնահատում իր բազմաթիւ ու լաւագոյն զաւակների արեան գնով ձեռք բերած իր նորածին ու թուլակազմ ազատութիւնը և պատրաստ է նոր զոհերով և նոր հերոսամարտերով բոլոր՝ արտաքին թէ ներքին թշնամիներից պաշտպանելու դրան:[21]

Անկախության և առօրյա իրականության միջև լարումները

Թե՛ Առաջին հանրապետության հիմնադիր ղեկավարների, ինչպես օրինակ՝ Ալեքսանդր Խատիսյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Հովհաննես Քաջազնունու, Սիմոն Վրացյանի հուշագրությունները և թե՛ պատմական ու արխիվային վավերագրերը միաբերան վկայում են, որ Անդրկովկասում Հայաստանի անկախ պետականության գոյությանն օբյեկտիվորեն պատրաստ չէին թե՛ քաղաքական վերնախավի ներկայացուցիչները և թե՛ ժողովուրդն ինքը: Աղբալյանի հիշատակմամբ՝ «իրերու անողոք բերումով եւ տարտամ, շուար ու ընկճուած տրամադրութեամբ» է, որ հայ ժողովուրդն ազատ ու անկախ էր հռչակվում իր երկրում:[22] Այսպես ազգային անկախությունը շատերի համար իսկ «անժամանակ ծնունդ» էր նկատվում, Լեոյի խոսքով՝ մի «անողորմ ծաղր»:[23] Հայ արվեստաբանության՝ որպես գիտության կայացման ակունքներում կանգնած մտավորական գործիչներից Գարեգին Լևոնյանը, իր հերթին, ազգային անկախության հռչակումից՝ «դարերի մեր ոսկի երազների» իրագործումից հետո հայ ժողովրդից սպասվող «ոգևորութեան» ու «մեծ հրճուանքի» բացակայությանն արձագանքելով, նշում էր. «Մայր հայրենիքն է ազատվում, բայց ինչու՞ չը կայ աղաղակ և ուրախութիւն, չի երևում երգ ու նուագ, չեն կատարվում տօներ ու մաղթանքներ»:[24] Ըստ էության հեգնաբար բարձրացված հարցի պատասխանն իրեն սպասեցնել չի տալիս հենց հեղինակի իսկ կողմից: Լևոնյանն ինքը, անդրադառնալով նորանկախ Հայաստանի անմխիթար իրականությանը, նկատում է. «... ամենուրեք համաճարակ ու մահ, սով և թանգութիւն: Հարազատ օջախը դարձել է բանտ, հայրենի քաղաքը դժոխք. ո՞ր տունն ու հայրենիքը կարող են գրաւել մարդուն, երբ դատարկ են և ամայի, և աւերակ են ու ծխացող»:[25]

Անկախության սկզբնաշրջանում Հայաստանն իսկապես նպաստավոր դրության մեջ չէր: Մի կողմից՝ ցեղասպանությունը, քառամյա ավերիչ պատերազմը, բոլշևիկյան հեղափոխությունն ու Անդրկովկասյան հանրապետության քայքայումը, մյուս կողմից՝ դրանց հետևանք դարձած բազմահազար որբերի, գաղթականության, սովի, աղքատության ու համաճարակ հիվանդության խնդիրներն իրենց աղետալի ազդեցությունն էին ունենում նորանկախ պետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի վրա, մի պետություն, որ, գրեթե առանց չափազանցությունների, համեմատվում էր «գերեզմանոցի» ու «գաղթականյանի» հետ: Չէին դադարել, ըստ

[21] «Խմբագրական», *Հայաստանի աշխատաւոր*, 28 մայիսի 1919 թ.:
[22] «Անկախութեան տօնը Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Հալլէպի եւ Երուսաղէմի մէջ. Ընկ. Ն. Աղբալեանի ճառը»:
[23] Լեո, *Անցյալից*, էջ 376:
[24] Գարեգին Լեւոնեան, «Կուլտուրական գործունէութիւն Հայաստանում», *Մշակ*, 18 փետրվարի 1919 թ.:
[25] Լեւոնեան, «Կուլտուրական գործունէութիւն Հայաստանում»:

էության, նաև Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ տարածքային ու սահմանային վեճերը: Հայաստանը դեռևս կազմակերպված չէր իրավականորեն: Նյութական սուղ ռեսուրսների պատճառով պետությունը բազմաթիվ խոչընդոտների էր բախվում երկրի կառավարման հարցում: Հայ կրթամշակութային ու արդյունաբերական հաստատությունները, ինչպես օրինակ՝ դպրոցները, երկաթուղային արհեստանոցները, թատրոնը, տպագրությունը, իրենց հերթին, գտնվելով Հայաստանի հանրապետությունից դուրս, դարձել էին նոր կազմակերպվող Վրաստանի հանրապետության ժառանգությունը: Ազգային անկախությունն, այսպիսով, զուրկ պետական ու կառավարչական որևէ ավանդույթներից, հայ քաղաքական վերնախավի ներկայացուցիչների առջև հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի բնորոշմամբ՝ «ոչնչից պետութիւն ստեղծելու» խնդիր էր դնում:[26] Ուրեմն պատահական չէ, որ նույնիսկ Հայաստանի անկախության հռչակումից հետո Թիֆլիսում կենտրոնացած Հայոց Ազգային խորհուրդը դժվարությամբ էր կարողանում փոխարինել Թիֆլիսի քաղաքական ու մշակութային հմայքը գյուղացիական և, ըստ էության, նյութական որևէ պայմաններից զուրկ Երևանով, մի քաղաք, որ «հակառակ իր կամքի՝ հայութեան կենտրոնն էր դարձել»:[27] Այս համատեքստում պետք է դիտել 1918 թվականի հունիսի 26-ին Երևանի Հայոց Ազգային խորհրդի նախագահ, ներքին գործերի ապագա նախարար Արամ Մանուկյանի նամակն՝ ուղղված Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին: Տեղում կառավարություն ձևավորելու համար հայ քաղաքական վերնախավի ներկայացուցիչներին Հայաստան հրավիրելու «վերջին յուսահատական փորձ» լինելով հանդերձ՝ նամակն ուշագրավ է նրանով, որ անկախությունը երևան է հանում ոչ թե սրբացված բարձր արժեքի, այլ առօրյայում դրա հարուցած գործնական ու հակասական հետևանքների անկյան տակ: Արամը ի ցույց է դնում Հայաստանի անկախացմանը հաջորդող օրերին երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակի կայունացմանը միտված պետության ջանքերը ու դրանց իրագործման հնարավորությունների միջև եղած բարդությունները, բարդություններ, որոնք անկախության անունից չի քողարկում քաղաքական գործիչն ինքը, երբ նշում է, օրինակ, Հայաստանի՝ Թուրքիայի հետ «դաշնագրի իսկական պատճէնը մինչև օրս» չունենալու հանգամանքի մասին: Այսպես Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին ուղղված իր խոսքում Մանուկյանը մասնավորապես նկատում է.

> Ամենքը զարմանում են ձեր անտարբերութեան վրա. ամբողջ ամիս է խաղաղութեան դաշինք էք ստորագրել այս երկրի համար, սակայն այս դժբախտ երկիրը այդ դաշնագրի իսկական պատճէնը մինչև օրս չունի.... Դաշն դուք էք կնքել, պահանջում են, որ մենք իրագործենք, առանց իսկական պայմաններն իմանալու:[28]

Արամը՝ Երևանի նահանգի 1918 թվականի մայիսի դիմադրության առաջնորդը, ըստ էության, այն սակավաթիվ գործիչներից էր, որը, չնայած ծանր պայմաններին, հաստատված լինելով Երևանում, ստանձնել էր նորանկախ պետականության կառավարումն ու երկրի պաշտպանությունը:[29] Արամի խոսքով՝ իրենց ուսերին էր հենց բանակի կարիքները հոգալու գործը. «այս աղքատ ու դժբախտ երկիրը 4 ամիս է կերակրում է քառասուն հազարանոց բանակ. ամսից աւելի է, որ 1-ին դիւիզիայի մասերը և կօմկօրը մեր վզին են»:[30] Արամը չի թաքցնում այդ ճանապարհին քաղաքական իրենց

---

[26] Վրացեան, *Հայաստանի հանրապետութիւն*, էջ 208:
[27] «Ազգային խորհրդի եւ կառավարութեան մեկնումը Երեւան», *Հորիզոն*, 17 հուլիսի 1918 թ.:
[28] Արամ Մանուկյան, *Փաստաթղթերի և նյութերի ժողովածու* (Երևան: ՀԱԱ, 2009), էջ 315:
[29] Երևանում Արամի վարած քաղաքական գործունեության մասին տե՛ս Արշալույս Աստուածատրեան, «Արամը», *Վէմ*, 1924, թիվ 6, էջ 23-36; 1935, թիվ 1, էջ 57-72:
[30] Մանուկյան, *Փաստաթղթերի և նյութերի ժողովածու*, էջ 315:

գործելակերպը. «Ժողովրդին թալանելով, կողոպտելով հազիւ ենք հասցրել այստեղ. այլևս անկարելի է շարունակել, բոլոր հասարակութեան դրամները գրավել ենք, բոլոր ձեռքի տակ եղած դրամները սպառել ենք...»:[31] Ժողովրդի աչքում հանրապետության «իսկական հիմնադիր» երևացող դաշնակցական գործչի համար, անշուշտ, առաջնային էր սեփական երկրի ճակատագիրը: Հայրենիքի պաշտպանությունը վեր դասելուն զուգահեռ, սակայն, ժողովրդի ցավերով մտահոգ քաղաքական գործչի համար, թվում է, այլևս անընդունելի էին երկրի քաղաքական դրությունն ապահովելուն ուղղված այն ձևերը, որոնք զանց էին առնում ժողովրդի իսկ բարօրությունն ու ապահովությունը: Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի ուշադրությունը հրավիրելով գյուղացիության, գաղթականության ու զինվորականության սոցիալական դրության, ինչպես նաև նյութական սուղ ռեսուրսների վրա՝ Արամն այդպիսով կարծես անուղղակիորեն ահազանգում էր դրանց անտեսման պարագայում պետությանը սպառնացող վտանգը: Ամենևին զարմանալի չէ ուրեմն, որ Արամի գրությունից դեռ տասը օր առաջ *Հորիզոն* թերթի խմբագրականը Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին հրապարակայնորեն ուղղված քննադատության մեջ հարցականի տակ էր դնում ազգային պետության արժեքն ու գոյության իմաստն առհասարակ.

> Այսօր Ազգ. Խորհուրդը միակ հիմնարկութիւնն է, որ իրաւունք և պարտականութիւն ունի բովանդակ ժողովրդի կարիքների մասին մտածելու.... Եթե Ազգ. Խորհուրդը դրանով էլ չի հետաքրքրուելու, ապա ինչի՞ համար գոյութիւն ունի նա, ի՞նչ արժէք ունեն՝ ստեղծուելիք պետութիւնն ու կառավարութիւնը: Պետութիւնից առաջ պէտք է մտածել ժողովրդի մասին, մի բան, որ, Ազգ. Խորհուրդը բոլորովին մոռացել է:[32]

Այսպիսով, ի հայտ բերելով իր մութ կողմը՝ անկախությունը երկրի ղեկավարի աչքում կապվում է ոչ թե նոր բաղձանքների իրագործման, այլ «օրը օրին բարդ խնդիրների» առաջադրման հետ, խնդիրներ, որոնք, չնայած գործադրված մեծ ջանքերին, նյութական ռեսուրսների սղության պատճառով, Մանուկյանի խոստովանությամբ՝ չեն կարողանում լուծել իրենք՝ քաղաքական գործիչները: Այսպես, եթե անկախությունը, գաղափարապես սրբացվելով, կտրվում էր նյութատնտեսական հիմքերից, ապա գործնականում կարծես ուղենշում էր պետության կայացման գործում հենց նյութական պայմանների դերն ու կարևորությունը: Եվ մի իմաստով նյութական սուղ ռեսուրսներն էին պատճառը, որ դեռևս ազգային անկախ պետականության հռչակման շուրջ քաղաքական բանավեճերում հայ հասարակական գործիչներից շատերին իսկ տրամադրում էր ազգային անկախության դեմ: Համբարձում Առաքելյանը հստակ էր. «Մենք չենք ունենայ հարկաւոր նիւթական միջոցները կառավարութիւն, զօրք, վարչութիւն պահելու համար»:[33]

Հայաստանի կոալիցիոն կառավարությունը «հաւաքական գործակցութեան» և «կողմնակի նպատակներու» միջև

Հայաստանի անկախության հռչակումից հետո՝ 1918 թվականի հունիսին, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը դաշնակցական գործիչ Հովհաննես Քաջազնուն վստահում է կառավարություն կազմելու խնդիրը: Քաջազնունու կուսակցությունը՝ Դաշնակցությունը, ծնունդ առնելով դարադարձի քաղաքական խմորումների, մասնավորապես՝ արևմտահայության հարցի հետնախորքին, այդուհանդերձ, օբյեկտիվորեն, պատրաստ չէր

[31] Մանուկյան, *Փաստաթղթերի և նյութերի ժողովածու*, էջ 315:
[32] «Ազգային խորհուրդը մոռացել է», *Հորիզոն*, 16 հունիսի 1918 թ.:
[33] Հ. Ա., «Հայկական անկախ իշխանութիւն»:

նորանկախ պետականության իշխանությունը միանձնյա ստանձնելու: Այսպիսով առաջ է գալիս քաղաքական կոալիցիա ձևավորելու անհրաժեշտություն, հանգամանք, որն, իր հերթին, բուռն բանավեճերի առիթ է դառնում ժամանակի քաղաքական դաշտում գործող ազգային կուսակցությունների միջև: Մասնավորապես Հայ Ժողովրդական կուսակցությունը հայ ժողովրդի «վերջին 30-40 տարիների» ազգային քաղաքականության «դրօշակակրին»՝ Դաշնակցությանը, մեղադրում էր դարասկզբի ազգային մեծ աղետի մեջ: Հրաժարվելով անդամակցել Դաշնակցության կառավարությանը՝ Ժողովրդական կուսակցությունը միաժամանակ պահանջում էր քաղաքական իշխող դիրքերից նրա հեռացումը: Այս քննադատության հիմքում Դաշնակցության՝ իբրև նախևառաջ «ագրէսիվ» քաղաքականություն վարողի՝ ժողովրդականների դիրքորոշումն էր: Մինչդեռ վերջիններիս համոզմամբ, երբ անկախության հռչակմամբ առաջ էր եկել նաև հարևանների հետ «նոր, ոչ ագրեսիվ, այլ խաղաղասէր քաղաքականութիւն» մշակելու խնդիրը, Դաշնակցության՝ իշխանության ստանձնումը վտանգավոր էր նկատվում քաղաքական հեռանկարների տեսանկյունից: Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Միքայել Պապաջանյանն այս հարցում հստակ էր.

> Թիւրքիան զիջեց հայկական անկախ պետութիւն ստեղծելու գաղափարի առաջ, եթէ միայն մենք այժմ փոխենք մեր մինչև հիմա վարած քաղաքականութեան կուրսը և հաւատ ու վստահութիւն ներշնչենք թէ Թիւրքիային, թէ մեր հարևան ժողովուրդներին-թաթարներին և այլոց-որ նախկին ագրեսիվ քաղաքականութիւնը վերացրել ենք:[34]

Որքան էլ Դաշնակցությունը քաղաքական կոալիցիայի ձևավորումը անհրաժեշտ նկատեր հանրապետության վարկը քաղաքակիրթ ազգերի աչքում բարձրացնելու տեսակետից, միանգամայն դեմ էր քաղաքական իշխող դիրքերից իրենց հեռացման այս պահանջին: Ինքը՝ Դաշնակցությունը, գտնում էր, որ նորանկախ Հայաստանի քաղաքական դաշտում չկար որևէ այլ կարող ուժ երկիրը կառավարելու համար, նկատառում, որն, իր հերթին, ուղղված էր հայ ժողովրդի կյանքում Դաշնակցության համոզմամբ գործնական հենարաններ չունեցող Ժողովրդական կուսակցության դեմ, «մի կուսակցութիւն, որը թէև իրեն «ժողովրդական» է կոչում, բայց ժողովրդական մասաների հետ գործ չէ ունեցել և հարկաւոր փորձառութիւնը չունի»:[35] Այսպես, ընդունելով հանդերձ նախընթաց շրջանում քաղաքական իրենց գործունեության ու հայության կյանքում դրա առաջ բերած, ըստ էության, աղետալի հետևանքների կապը՝ Դաշնակցությունն, այնուամենայնիվ, հստակ վերապահում ուներ, թե «զուտ հայկական չեն այսօրուայ աղէտի գլխաւոր պատճառները» և որ «գլխաւոր աղբիւրն ու պատճառը յատկապէս *հայութեան* կողմից դէպի Թիւրքիան ունեցած «սխալ», ագրեսիւ ընթացքը չէ»:[36] *Հորիզոն* թերթում տպագրված «Մեր ազգային քաղաքականութեան եւ կառավարութեան փոփոխութիւնը» վերնագրով հոդվածում հեղինակը, արձագանքելով իրենց կուսակցության դեմ ուղղված քննադատություններին, նկատում է.

---

[34] «Ժողովրդական մեծ ժողով», *Մշակ*, 11 հունիսի 1918 թ.: Ազգային կառավարության ձևավորման խնդրի շուրջ ժողովրդականների դիրքորոշման մասին տե՛ս նաև Հ. Ա., «Մեր տեսակէտը», *Մշակ*, 12 հունիսի 1918 թ.; «Մայիսի 26-ի ժողովը», *Մշակ*, 5 հունիսի 1918 թ.; Հ. Ա., «Հայկական անկախ-հանրապետութիւնը», *Մշակ*, 8 հունիսի 1918 թ.; Հ. Ա., «Հայկական կառավարութիւն»:

[35] Թ., «Մեր ազգային քաղաքականութեան եւ կառավարութեան փոփոխութիւնը», *Հորիզոն*, 19 հունիսի 1918 թ.:

[36] Թ., «Մեր ազգային քաղաքականութեան եւ կառավարութեան փոփոխութիւնը»:

> Թիւրքասիրութիւնը չէր փրկի մեզ այն կորուստներից և զրկանքներից, որ մենք կրեցինք: Բայց և այնպէս՝ մեր ազգային մարմնի վարած քաղաքականութիւնը եթէ աւելի ազատ լինէր հակաթիւրքական գծերից և քայլերից, այսօր աւելի դիւրին և նպաստաւոր կը լինէին հայ-թիւրքական ցանկալի յարաբերութիւններ հաստատելու պայմանները:[37]

Այսպես կարևորելով «ազգային քաղաքականութեան առաջիկայ փոփոխութեան» նշանակությունը՝ Դաշնակցության պաշտպանության դիրքերում կանգնած հոդվածագիրը այն կապում էր «ոչ թէ կուսակցական, այլ լոկ անձնական բնոյթի» փոփոխության և այն համոզման հետ, թէ «ասպարէզ պիտի գան թէ՛ Դաշնակցութեան, թէ՛ միւս կուսակցութիւնների շարքերից այն անհատները, որոնք ամենից համոզուած և լաւատես կողմնակիցներն են եղել հայ-թուրքական համերաշխութեան»:

Ազգային կառավարության փոփոխության խնդրի համատեքստում Դաշնակցության և Ժողովրդական կուսակցության միջև, ուրեմն, ազգային անկախության հռչակմամբ վերստին առաջ էին եկել նաև Թուրքիայի հետ «բարի յարաբերութիւններ» հաստատելու, «փոխադարձ յարգանքով և համերաշխութեամբ աշխատելու և գործելու», ընդհուպ նաև թուրքական «օրիէնտացիա» ընդունելու շուրջ քաղաքական մտորումներ:[38] Առաջին հանրապետությունում տարածաշրջանի հարևանների, մասնավորապես՝ Թուրքիայի հետ համերաշխություն հաստատելու փորձի տեսակետից ինքնին արժեքավոր թվացող այս դիրքորոշումներն, այդուհանդերձ, երևան են գալիս այլ, կարելի է ասել, միանգամայն հակառակ լույսի ներքո, երբ դրանց մոտենում ենք ոչ թե քաղաքական բուն նպատակադրման, այլ դրա տակ աշխատող ու առաջին հայացքից կարծես չերևացող արդիասիրական բաղձանքների ու քաղաքակրթական պատճառների դիտանկյունից: Այսպես ազգային պետականության կայացման համատեքստում նախևառաջ Արևմուտքն էր, որ շարունակում էր գործուն ուժ ներկայացնել, ինչպես քաղաքական, այնպես էլ մշակութային առումով: Ուրեմն Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու *նպատակն* այս պարագայում լուսավոր Արևմուտքի հետ կապվելու մի յուրատեսակ *միջոց* էր ըմբռնվում: Գարեգին Լևոնյանը, ով *Մշակի* էջերում ազգային մշակույթին վերաբերող հարցերին զուգահեռ՝ հանդես էր գալիս նաև ժամանակի քաղաքական կյանքին առնչվող հոդվածներով, այսպես է ձևակերպում հայության առջև կրկին ծառացած քաղաքական կողմնորոշման ու այդ խնդրում թուրքական «օրիէնտացիա» ընդունելու կարևորությունը.

> Ինքը Թիւրքիան, առաւելապէս մայրաքաղաքը կուլտուրապես ֆրանսիական և քաղաքականապէս գերմանական օրիէնտացիա ունի. հետևապէս եթէ մենք....մեր քաղաքական ու պետական շահերի պաշտպանութեան համար ընդունենք հարաւային օրիէնտացիա, մենք Թիւրքիայի միջոցով մեր լոյսը պիտի ստանանք Գերմանիայից և Ֆրանսիայից, ինչպէս որ նոյն այդ ազգերի կուլտուրական բարիքները մենք վայելում էինք Ռուսաստանի վրայով կամ միջոցով:[39]

---

[37] Թ., «Մեր ազգային քաղաքականութեան եւ կառավարութեան փոփոխութիւնը»:

[38] Տե՛ս օրինակ՝ «Փոխադարձ անվստահութիւնը», *Հորիզոն*, 5 հունիսի 1918թ.; «Ներքին ֆրոնտը», *Հորիզոն*, 8 հունիսի 1918թ.:

[39] Վաղինակ, «Մեր ներկան», *Մշակ*, 16 հունիսի 1918 թ.: Լևոնյանի այս տողերը միաժամանակ հնարավորություն են վերհիշելու ստալինյան և սառըպատերազմյան քաղաքականությունների արդյունքում մոռացված՝ Ռուսաստանի՝ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին հայության համար եվրոպականացման հնարավորություն հանդես գալու քաղաքական իրողությունը: Այս մասին տե՛ս Վարդան Ազատյան, «Քսաներորդ դարի ամերիկյան արվեստը և Հայաստանը», ըստ՝ Էրիկա Դոսս, *Քսաներորդ դարի ամերիկյան արվեստ* (Երևան: Էյվա արվեստների հիմնադրամ, 2022), էջ 357-392: Մեկ այլ հոդվածում Լևոնյանը այլ

Թուրքիայի հետ համերաշխությունը լուսավորությամբ Արևմուտքի հետ կապվելու միջոց դարձրած քաղաքական այս օրակարգն, այդուհանդերձ, արդեն անկախ Հայաստանի համատեքստում շարունակում էր կենսագործել հայության՝ սեփական տեղակայությանը հակառակ՝ տարածաշրջանում եվրոպական լուսավորության արժեքների առաջամարտիկ հանդես գալու հայ եկեղեցու փրկչական օրակարգը, մի օրակարգ, որ նախևառաջ արտաքին թշնամիներին հանդիման ժողովրդին լուսավոր գաղափարով միաբանելու ուղեծրում էր կայանում:

Այսպես, Դաշնակցության և Ժողովրդական կուսակցության միջև ծավալվող քաղաքական բանավեճերն, ըստ էության, անհնար էին դարձնում անկախության սկզբնաշրջանում քաղաքական կոալիցիայի ձևավորումը:[40] Միայն 1918 թվականի նոյեմբերին է, որ, ի վերջո, Դաշնակցությունն ու Ժողովրդական կուսակցությունը կազմում են կոալիցիոն կառավարություն, հանգամանք, որն, այդուհանդերձ, չէր մեղմում երկու կուսակցությունների միջև եղած գաղափարական սուր տարաձայնությունները: Հայ հասարակական-քաղաքական դաշտում այդ տարաձայնությունների ունեցած բացասական ազդեցության վերհանման հետաքրքրական օրինակ է 1919 թվականի մայիսի 8-ին *Աշխատանք* թերթում տպագրված «Կօալիսիոն կառավարութիւնը» վերնագրով հոդվածը: Այստեղ հեղինակը, ընթերցողին պարզելով կոալիցիոն կառավարությունների բուն «կոչումը», որն էր՝ հանուն «պետական կեանքի ամրապնդման» «ի մի հաւաքել, պետական մէկ և միակամ մեքենայի մէջ» հասարակության բոլոր կենսունակ ուժերը, Հայաստանի պարագայում հստակ վերապահում ուներ.

> Ներկայ կօալիսիոն կառավարութիւնը ոչ թե համադրութիւնն է քաղաքական և հասարակական ռամկավար տարրերու և կամ արտայայտութիւն հաւաքական գործակցութեան, հասարակաց մէկ նպատակի շուրջ, այլ այդ պիտակին տակ, ընձեռված օրինականութիւն մը այն որոշ և ծանօթ խմբակցական ուժերուն, որոնք,

---

դիտանկյունից է ներկայացնում տարածաշրջանի հարևանների հետ հարաբերության կարևորությունը հայերի համար. «Փոխադարձ զիջումներով ապրենք մեր հարևան ազգերի հետ հաշտ, խաղաղ, դրսի քամիներից լինենք անչափ զգոյշ և չենթարկվենք անտեղի ոգևորութիւնների, որովհետև այդ դրսից եկողները էլի մի օր կը գնան (ինչպես որ գնացին) և մենք դարձեալ կը մնանք ու մնալու ենք դարերով մեր երկրում մեր հարևանների հետ»: Տե՛ս Վաղինակ, «Մեր ներկան», *Մշակ*, 9 հունիսի 1918 թ.:

[40] Արդյոք անկախության սկզբնաշրջանում ազգային կառավարություն ձևավորելու բարդությունները կապվում էին միայն ազգային կուսակցությունների միջև գաղափարական տարաձայնությունների, թե առհասարակ նորանկախ պետականության նյութական ծանր պայմանների հետ, ինքնին բանավեճերի նյութ էր երկու կուսակցությունների միջև: Հունիսի 28-ին *Հորիզոնում* տպագրված «Հայկական կառավարութեան խնդիրը» վերնագրով հոդվածի հեղինակը Ժողովրդական կուսակցության՝ կառավարության մեջ չմտնելու իրողությունը բացատրում էր, օրինակ, ոչ թե քաղաքական տարաձայնություններով, այլ «անհատական» ու «թայֆայական» նկատառումներով. «Եվ գուցէ իրականութեանը համապատասխան է այն տարածուած կարծիքը, թէ անյաջողութեան գլխաւոր պատճառն այն է, որ ոչ ոք չի կամենում այս դժուարին կացութեան օրերին զոհաբերութիւն անել, որ և է պատասխանատուութեան տակ մտնել....Չէ՞ որ, ասում են, Դաշնակցականի նախագահութեամբ կազմուած կաբինէտի մէջ չկարողացաւ մտնել մի Պապաջանեան *Երեւանում* գործելու համար, գտնելով, որ դաշնակցականները օսմանեան կառավարութեան հետ չեն կարող հայ ժողովրդի շահերին համապատասխան քաղաքականութիւն վարել, մինչդեռ նոյն կուսակցութեան պատկանող նոյն անհատը հնարաւոր գտաւ իր համար մասնակցել դաշնակցականի նախագահութեամբ կազմուած պատւիրակութեան մէջ, որը սակայն հայ ժողովրդի շահերին համապատասխան քաղաքականութիւն կարող է վարել *Պոլսում* (Ընդգծումը՝ հեղինակի): Տե՛ս «Հայկական կառավարութեան խնդիրը», *Հորիզոն*, 28 հունիսի 1918 թ., ինչպես նաև Սիմօն, «Սարը ծնեց մուկ», *Հորիզոն*, 18 հունիսի 1918 թ.: Երևան տեղափոխվելու և տեղում ազգային կառավարություն ձևավորելու՝ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին ուղղված հրապարակային բազմաթիվ կոչերից տե՛ս նաև «Մեր անելիքը», *Հորիզոն*, 30 հունիսի 1918 թ.; «Դէպի երկիր», *Հորիզոն*, 13 հուլիսի 1918 թ.; «Ազգային խորհրդի եւ կառավարութեան մեկնումը Երեւան», *Հորիզոն*, 17 հուլիսի 1918 թ.; «Սպառնալիքի հանդէպ», *Հորիզոն*, 2 հուլիսի 1918 թ.; «Հայոց Ազգային խորհրդի նախագահի մօտ», *Հորիզոն*, 17 հուլիսի 1918 թ.:

> ինչպէս ցոյց տուած են անցեալի փաստերը, եթէ մէկ շահ կուտան ընդհանուրին, տասը անոր թիկունքէն, կ՚ուղղեն դէպի մասնաւորն ու խմբակցականը:[41]

Ազգային պետականության համար «չափազանց վնասակար» և «աղետաւոր» երևացող այս իրողությունն հոդվածագրի աչքում սրվում է, երբ նա այն դիտարկում է ժողովրդի իսկ դիրքից: Այսպես, եթե քաղաքական դաշտում «նախարարներն առանձին միաւոր են նախարարական խորհուրդի մէջ», ապա, հոդվածագրի համոզմամբ՝ ժողովրդի համար դրանք «անկախաբար և անջատ պատասխանատուութիւններով գոյութիւն չեն կրնար ունենալ»: Փոխարենը՝ դրանք կազմում են մեկ ամբողջություն, «զոր կառավարութիւն կը կոչենք մենք»:[42]

Չնայած հեղինակի՝ հանուն պետականության ազգային միասնության գաղափարն ամեն կերպ պաշտպանելու ջատագովությանը՝ հոդվածն ինքնին երևան է հանում պետության՝ ազգային ընդհանուր շահի տակ կուսակցությունները, այդ թվում և հասարակությունը միավորելու անկարողությունը և ուրեմն քաղաքական կոալիցիայի մշակույթի ձևավորման բարդությունները, հանգամանք, որ ազգային մեր պետականության վաղ, արագ ու չսպասված լինելու ուղիղ հետևանք է կարծես: Այդ տարաձայնությունները, սակայն, մյուս կողմից հնարավորություն են բացում Առաջին անկախ պետականության կյանքը տեսնելու քաղաքական ներքին հակասությունների, այլ ոչ հօգուտ քաղաքականապես միաբան ազգի կայացման արդի տեսլականի այդ հակասությունների մաքրման միջոցով:[43]

Առաջին հանրապետության առաջին ցուցահանդեսը

> Մեծագոյն դժուարութիւնը հոն էր սակայն, որ չէր բաւեր ճակատագրական խօսքը արտասանել, չէր բաւեր Հայաստանը անկախ հռչակել: Հարկ էր խօսքի բարձրութեան հասցնել մեր անմխիթար իրականութիւնը: Պետք էր ժողովուրդը, հազար աղէտներու մատնուած հայութիւնը հենարան դարձնել մեր մեծ ու պատասխանատու յանձնառութեան:[44]

Առաջին հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի՝ անկախության հռչակման քաղաքական իրադարձին հետահայաց անդրադարձող այս խոսքերը, որ երևան են հանում ազգային անկախության՝ իբրև ներկայի իրականությանը հակադրված բարձր գաղափարի ու վերջինիս կենսագործման ճանապարհին ժողովրդին հենարան դարձնելու քաղաքական հրամայականը,

---

[41] «Կօալիսիոն կառավարութիւնը», *Աշխատանք*, 8 մայիսի 1919 թ.:
[42] «Կօալիսիոն կառավարութիւնը»:
[43] Կարևոր է նկատի առնել նաև, որ դաշնակցականներն իրենք հստակ դիրքորոշում ունեին, թե նախորդիվ հայության առջև ծառացած քաղաքական գրեթե բոլոր խնդիրների՝ պատերազմի ու հաշտության, կամավորական շարժման, Տաճկահայաստանի ինքնավարության, Անդրկովկասի անկախության, թուրքական վերջնագրի ընդունման շուրջ հայ ժողովրդականները Դաշնակցության հետ սկզբունքային տարաձայնություն չեն ունեցել: Հայաստանի առաջին հանրապետության արդարադատության նախարար Արշամ Խոնդկարյանը, նշելով, որ նախընթաց շրջանում ազգային քաղաքականությանն առնչվող հարցերում հայ քաղաքական կուսակցությունները գրեթե համանման դիրքորոշում ունեին, կառավարություն ձևավորելու խնդրի վերաբերյալ, այդուհանդերձ, նկատում է. «Միակ հարցը, որ ունէր զուտ ներքին խնդրի բնոյթ, որ ծագել էր այն ժամանակ....դա կառավարութեան հարցն էր: Եւ բնորոշ է, որ հէնց այս խնդրում ճեղքվեց ստեղծուած միացեալ ճակատը, առաջ եկան տարակարծութիւններ կուսակցութիւնների մէջ և ի վերջոյ հարցը լուծեց ոչ այն ուղղութեամբ, ինչ որ համապատասխանում էր այդ ժամանակւայ ծանր կացութեան: Ինչպէս յայտնի է, Հայաստանի անդրանիկ դահլիճը չեղաւ «ազգային միութեան» կառավարութիւն, ինչպէս որ էր Վրաստանինը»: Տե՛ս Արշամ Խոնդկարեան, «Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում», *Վէմ*, 1934, թիվ 1, էջ 92:
[44] «Անկախութեան տօնը Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Հալլէպի եւ Երուսաղէմի մէջ»:

առհասարակ ուղենշային պետք է համարել Առաջին հանրապետության քաղաքական ու մշակութային կյանքի կայացման համար:[45] Ազգային անկախության՝ շատ առումներով անսպասելի լինելու հանգամանքը, որ կանխորոշում էր քաղաքական ինքնուրույնության ու դրան մեծապես անպատրաստ ժողովրդական լայն խավերի միջև լարումները, Առաջին հանրապետության ղեկավարներին այդպիսով ստիպում էր արդեն իրողություն դարձած անկախության «բարձրութեանը» հասցնել ոչ միայն ներկայի «անմխիթար իրականութիւնը», այլև քաղաքական նոր սուբյեկտին՝ Հայաստանի ժողովրդին: Այսպես հանրապետության քաղաքական ղեկավարների աչքում ազգային անկախության բարձր գաղափարները նախևառաջ մշակույթի միջոցով է, որ պետք է կապվեին առօրյա նիստուկացով ապրող ժողովրդական ներքնախավերի հետ: Զարգացած մշակույթի գոյությունն իր հերթին գրավականը կլիներ ոչ միայն հայերի քաղաքական ինքնուրույնության, այլև թույլ կտար նրան «ներկայումս գոյութիւն ունեցող կուլտուրական ազգերի շարքում հանդէս գալ իբրև կուլտուրական մի միաւոր»:[46]

Ազգային պետության կայացման այս համատեքստում առանձնակի կարևորություն էին ձեռք բերում ինչպես 19-րդ դարից արդեն սկզբնավորված ազգային մշակութային ավանդույթների գործնական վերաբացահայտումներն, այնպես էլ կրթամշակութային ու գեղարվեստական հաստատությունների, ինչպես օրինակ՝ Պետական թատրոնի, Ազգային թանգարանի, Հնությունների պահպանության կոմիտեի, Պետական համալսարանի, Գեղարվեստական ու Երաժշտական դպրոցների հիմնադրման գործընթացները: Առաջին հանրապետությունում գեղարվեստական ու մշակութային կյանքի կայացման այս համատեքստում է նաև, որ նորանկախ «Հայաստանի կառավարութեան առաջարկութեամբ»[47], 1919 թվականի մայիսի 25-ին՝ անկախության հռչակման տարելիցի առիթով, երևանյան հասարակության առջև առաջին անգամ իր դռներն էր բացում Թիֆլիսի Հայ արվեստագետների միության երրորդ ցուցահանդեսը «Երևանի ամենաշքեղ, աւաղ կիսակառույց շէնքի ընդարձակ դահլիճում», որտեղ «նկարիչներն իրենք 2-3 օրւայ մէջ մի կերպ կարգի բերելով այդ սրահը- կարողացան մատչելի դարձնել հասարակութեան այցելութեան համար»:[48]

Հայ արվեստագետների միության երկրորդ ցուցահանդեսից աննշան փոփոխություններով Թիֆլիսից Երևան փոխադրված այս ցուցահանդեսը, որ նորանկախ Հայաստանում, այդուհանդերձ, ձեռք էր բերել նաև իր ազգային քաղաքական երանգավորումները, նախևառաջ կարևորվում էր պատմական առանձնահատուկ նշանակությամբ:[49] *Հայաստանի աշխատաւոր* թերթի անդրադարձում կարդում ենք. «Սա առաջին դէպքն է, որ

---

[45] Նախարարությունը սկզբնապես կոչվել է Հանրային կրթության նախարարություն, այնուհետև 1919 թվականի օգոստոսից՝ վերանվանվել Հանրային կրթության և արվեստի նախարարություն: Նիկոլ Աղբալյանը հանրային կրթության և արվեստի չորրորդ նախարարն էր, ով այդ պաշտոնում փոխարինել էր Սիրական Տիգրանյանին: Առաջին հանրապետությունն իր գոյության երկուսուկես տարվա ընթացքում ունեցել է հանրային կրթության վեց նախարար, որոնցից են Միքայել Աթաբեկյանը, Գևորգ Մելիք-Կարագյոզյանը, Սիրական Տիգրանյանը, Նիկոլ Աղբալյանը, Գևորգ Ղազարյանը և Վահան Մինախորյանը:

[46] L. Թադէոսեան, «Հայի ամենամեծ տօնը», *Յառաջ*, 28 մայիսի 1920 թ.:

[47] «Հայ Արւեստագէտներու Միութեան ցուցահանդէսը», *Աշխատանք*, 24 մայիսի 1919 թ.:

[48] man, «Հայ գեղարւեստագէտների միութեան պատկերահանդէսը Հայաստանում», *Ժողովուրդ*, 6 հունիսի 1919 թ.:

[49] Ազգային նկատառումներից ելնելով՝ Երևանում ցուցահանդեսի կրած փոփոխությունների մասին *Ժողովուրդ* թերթում, օրինակ, կարդում ենք. «Երևանում նա փոքր ինչ կերպարանափոխւել է. նաև կրճատւած նկարները փոխարինւել են նորերով, ազգայնացման մտքով դուրս են մնացել էն օտար նկարիչները, որոնց դժւար թէ սիրէր Երևանը»: Տե՛ս man, «Հայ գեղարւեստագէտների միութեան պատկերահանդէսը Հայաստանում»: Ցուցահանդեսին ներկայացված շուրջ 250 աշխատանքները համալրվել էին նաև էջմիածնի վանական թանգարանում պահվող՝ Վարդգես Սուրենյանցի, Եղիշե Թադևոսյանի, Հմայակ Արծաթպանյանի, Արշակ Ֆեթվաճյանի, Փանոս Թերլեմեզյանի՝ հայկական միջնադարյան ձեռագրերից ընդօրինակած մանրանկարներով: Տե՛ս Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, էջ 76:

Հայաստանում հայ գեղաստեղծ միտքը իր արտադրութիւններն է ցուցադրում: Սա ևս մի նիշ է, որ հայ ժողովրդի ստեղծագործական միտքն ու կամքը իրենց պատմական և կուլտուրական հայրենադարձն են կատարում»:[50] Մեծ հույսերով ի սրտե ողջունելով ցուցահանդեսը «հայրենի ու հարազատ միջավայրում» ազգային արվեստի զարգացման հեռանկարների տեսանկյունից, ինչպես նաև ցուցահանդեսի հանդեպ անտարբերությունը «կուլտուրական յետամնացութեան նշան և յանցանք» որակելով՝ հոդվածագիրն այդպիսով երևանյան «իներտ ու անտարբեր» հասարակությանը ցուցահանդեսի «բարձր հաճոյքը» վայելելու կոչ էր անում: Ինչպե՞ս էր, սակայն, ցուցահանդեսը ներկայանում հենց իր՝ ժողովրդի աչքում, տեղեկանում ենք արդեն *Ժողովուրդ* թերթում տպագրված «Հայ գեղարուեստագետների միութեան պատկերահանդէսը Հայաստանում» խորագրով հոդվածից, որտեղ, ի թիվս այլոց, նշվում էր. «... ժողովրդի համար միանգամայն զարմանալի ու տարօրինակ երևոյթ է՝ տեսնել գեղարուեստը գաղթականների սոված շարքերին սովոր աչքերով»:[51] Այսպես սովի ու հիվանդությունների, աղքատության ու թշվառության պայմաններում ցուցահանդեսն Առաջին հանրապետությունում ավելի շուտ որպես փրկարար մի բալասան էր հանդես գալիս, երբ «հարկաւոր էր հոգեկան անդորրութիւն, պէտք էր բթացած մտքերին թռիչք ու յոգնած երևակայութեան համար նոր գոյների, վառ գոյների գեղեցիկ համերաշխութիւն»:[52] Այսպես որքան ծանր էին առկա նյութական պայմանները, այնքան սուր էին դառնում դրանցից ազատագրվելու ու հոգևոր բարձր գաղափարին ապավինելու ձգտումները: Սա է պատճառը, որ ցուցահանդեսն Առաջին հանրապետությունում արժեքավորվում էր հատկապես ներկա թշվառ իրականությունից վեր ելնելու և «մի բարձր հոգեվիճակ» ապրելու հնարավորության տեսակետից: *Հայաստանի աշխատաւոր* թերթում հոդվածագիրը Հայաստանի անմխիթար պայմաններում ցուցահանդեսի կազմակերպումն ինքնին իբրև «հայկական տոկունութեան չափանիշ» նկատելով, միանգամայն հստակ էր. «...որքան խոշտանգւի մեր ժողովրդի հոգին ու մեր հոգին, բայց և այնպէս կայ մի սրբազան պահանջ մոռանալու առօրեան, կոնկրետն ու եզակին և ապրել մի բարձր հոգեվիճակ, որի անունն է գեղարուեստական արբումն»:[53] Հոդվածագրի այս նկատառումը, մի կողմից երևան է հանում նյութական ծանր պայմաններում արվեստի հմայիչ ուժի ու դրա բարձր հաճույքին տրվելու եռանդը, մյուս կողմից ի հայտ է բերում Առաջին հանրապետությունում առօրյա կյանքի ու մշակույթի միջև եղած լարումները: Այս իմաստով մշակույթը ըմբռնվում էր նախևառաջ բարձր քաղաքակրթության անկյան տակ, ինչն անխուսափելիորեն բերում էր վերջինիս՝ առօրյա կենցաղավարության հետ հակադրմանը, քանի որ որքան մեծ էին բարձր քաղաքակրթության մաս դառնալու բաղձանքները, այնքան ավելի սուր էին դառնում նաև դրանք կենցաղից կտրելու և բարձր ու ներփակ մշակութային ձևերի մեջ տեսնելու ձգտումները: Այս լարումների հետևախորքին է նաև, որ հոդվածագրի՝ ցուցահանդեսով ոգևորությունն ի վերջո տեղի է տալիս զայրույթի, երբ նա նկատում է, որ քիչ են այն դիտողները.

> Դուրսը հինգ քայլի վրայ, վարը փողոցը փոշու ծով է, փերեզակներն ու սպեկուլեանտները բզկտում են իրար, քահանաները մի յոգնած մրմռոցով ուղեկցում են մեռելին, կառքերը Երևանին յատուկ թամբալութեամբ աղմկում են փողոցում, շոգի մէջ հազարաւորները ամենօրեայ միակերպութեամբ մաշում են

[50] Գեղասէր, «Հայ արուեստագէտների պատկերահանդէսը», *Հայաստանի աշխատաւոր*, 1 հունիսի 1919 թ.:
[51] man, «Հայ գեղարուեստագէտների միութեան պատկերահանդէսը Հայաստանում»:
[52] man, «Հայ գեղարուեստագէտների միութեան պատկերահանդէսը Հայաստանում»:
[53] Գ. Շահինեան, «Հայ արուեստագէտների նկարահանդէսը Երեւանում», *Հայաստանի աշխատաւոր*, 6 հունիսի 1919 թ.:

> մայթերը փողոցի մաշւած ու անատամ սրախօսութիւններով... Դոցանից և ոչ մէկը չի անցնում ներս, ուր նկարները հրամայում են քեզ:[54]

Այս իրողությունը հոդվածագրի բուռն քննադատությանն արժանանալուն զուգահեռ՝ ժողովրդին իր առօրյա կենցաղավարությամբ դնում է մշակութային բարձր գաղափարներին հակադիր բևեռում՝ ցուցահանդեսն ընդհուպ նույն ժողովրդի հոռի բարքը դարմանելու միջոց ըմբռնելով, ժողովուրդ, որ, հոդվածագրի համոզմամբ, «ներսը կը մեղմանային, կը լաւանային, կը մարդանային»:[55] Այսպես մշակույթը, որ Առաջին հանրապետությունում ստանձնել էր անկախության բարձր գաղափարները ժողովրդական ներքնախավերին ներհյուսելու դերը, գործնականում սրում էր պետության ու ժողովրդական լայն խավերի միջև գոյություն ունեցած լարումները, քանի որ ուղղակիորեն դեմ էր ելնում արդեն ժողովրդի ֆիզիկական գոյությունն անմիջականորեն ապահովող ապրուստի իրական պայմաններին: Ցուցահանդեսից մոտ երեք ամիս անց՝ 1919-ի սեպտեմբերի 16-ին կայացած ՀՀ խորհրդարանի նիստում Աղբալյանն արդեն հստակորեն խոսելով «գեղարվեստի միջոցով» ժողովրդի «այլասերված հոգին» կրթելու մասին, նշում էր.

> Չպետք է տարվել առօրյա ընթացիկ հոգսերով.... Հացը ստորադաս է արվեստից: Ոչ թե արվեստը պետք է իջնի դեպի ժողովուրդը, այլ ժողովուրդը՝ [բարձրանա] դեպի արվեստը:[56]

Անկախության պատկերը բաղձանքի և իրականության միջև

Հայ արվեստագետների միության ցուցահանդեսի կազմակերպումը Երևանում Առաջին հանրապետության գեղարվեստական կյանքի կայացմանն ուղղված առաջին քայլերից պետք է նկատել: Հայաստանի կառավարությունն, իր հերթին, նկարիչներին նյութապես աջակցելու, ինչպես նաև ապագա Ազգային թանգարանի հիմքերը դնելու նպատակով գումար է հատկացնում ցուցահանդեսից գեղարվեստական գործերի ձեռքբերման համար:[57] Հայաստանի կառավարության և Հայ արվեստագետների միության միջև համագործակցության այս շրջանակում են դիտելի նաև Միության անդամներից շատերի, ինչպես օրինակ՝ Մարտիրոս Սարյանի, Հակոբ Կոջոյանի, Ալեքսանդր Թամանյանի, անմիջական մասնակցությունը Առաջին հանրապետության պետական խորհրդանշանների՝ դրոշի, զինանշանի, թղթադրամների, ինչպես նաև նամականիշների ու հեռագրային բացիկների գեղարվեստական ձևավորման գործընթացներում:[58] Առաջին հանրապետությունից մեզ հասած հեռագրային բացիկի հազվագյուտ օրինակ է 1919-ին Հայաստանի անկախության հռչակման տարելիցի առթիվ թողարկված բացիկը: Թեև

---

[54] Շահինեան, «Հայ արւեստագէտների նկարահանդէսը Երեւանում»:
[55] Շահինեան, «Հայ արւեստագէտների նկարահանդէսը Երեւանում»:
[56] *Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ.* (Երևան: ՀԱԱ, 2009), էջ 267-268:
[57] Այս առթիվ *Հայաստանի աշխատաւոր* թերթում կարդում ենք. «Հայաստանի կառավարութիւնը չպէտք է առիթը բաց թողնի, չպէտք է թողնի, որ եղիշէ Թադէոսեանի, Խաչատրեանի և Միքայէլեանի նկարները դուրս գան: Պետութիւնը պէտք է գնէ, և այս անդրանիկ նկարահանդէսով հիմք պէտք է դնի ազատ ու անկախ Հայաստանի գեղարւեստական գալերէայի»: Տե՛ս Գ. Շահինեան, «Հայ արւեստագէտների նկարահանդէսը Երեւանում», *Հայաստանի աշխատաւոր*, 12 հունիսի 1919 թ.: Հայտնի է, որ ցուցահանդեսից գեղարվեստական գործերի ձեռքբերման համար կառավարությունը հատկացրել էր 100.000 ռուբլի: Տե՛ս օրինակ՝ «Քրոնիկոն», *Ժողովուրդ*, 11 հունիսի 1919 թ.; «Ընթացիկ կեանք», *Աշխատանք*, 12 հունիսի 1919 թ.; «Հայաստան», *Ժողովրդի ձայն*, 27 հունիսի 1919 թ.:
[58] Տե՛ս «Քրոնիկոն», *Ժողովուրդ*, 30 հունվարի 1920 թ.; «Կառավարական որոշումներից», *Ժողովուրդ*, 11 հուլիսի 1920 թ.:

վերջինիս հեղինակը մեզ հայտնի չէ, այնուամենայնիվ, բացիկն ինքը օգտակար կարող է լինել Առաջին հանրապետության քաղաքական ու մշակութային ընդհանուր տեսլականը «պատկերացնելու» տեսակետից:[59]

[59] Բացիկը գտնվում է պատմաբան Հայկ Դեմոյանի անձնական արխիվում:

Ուղղաձիգ ձգվածություն ունեցող, մոտ մեկ ձեռաչափ այս բացիկի կոմպոզիցիոն կառուցվածքը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հորիզոնական հատվածների. ա) վերին՝ համեմատաբար փոքր հատվածում, աջ անկյունից կարծես պատկերի տարածություն մտնող ու անկախության միամյա տարեդարձն ավետող ծիծեռնակը՝ կտուցին «1919» թվակիր ծրարով, և նրանից ձախ տեղակայված «Կեցցէ անկախ Հայաստան» գրությունը, բ) կենտրոնական հատվածում՝ նկարի գրեթե ողջ մակերեսը զբաղեցնող դրոշը և գ) դրոշի «հովանու» ներքո՝ պատկերի ստորին հատվածում կարծես Առաջին հանրապետության առօրյա կյանքը պատկերող տեսարանը: Պատկերում դրոշի այս միանգամայն գերիշխող դիրքի ստանձնումը պայմանավորված է ոչ միայն վերջինիս մասշտաբայնությամբ, այլև առհասարակ միակ գունավորված առարկան լինելու իրողությամբ, ինչն էլ սև ու սպիտակ պարզ տոնայնությամբ հատկանշվող գրաֆիկական այս պատկերում դրոշն ակնհայտորեն առանձնացնում է իր վառ արտահայտչականությամբ: Ազգային պետության խորհրդանշանի՝ թե՛ գունային և թե՛ ծավալային առումով այս շեշտակի ընդգծվածությունն այսպիսով երևան է հանում ազգային անկախության՝ իբրև բացարձակ և գերագույն գաղափարի սրբացված արժեքն Առաջին հանրապետությունում: Այսպես օրինակ՝ *Ժողովուրդ* թերթում տպագրված «Մեր ամենամեծ տօնը» վերտառությամբ հոդվածի հեղինակ Հովհաննես Ստեփանյանը ազգային անկախության օրվա առթիվ նշում էր.

> Այդ օրը բոլոր գիտակից հայերը ինչ դասակարգի և քաղաքական համոզմունքի էլ լինեն, հանդես են գալու արևի պայծառութեամբ հաստատելու, որ անհատական և դասակարգային գաղափարները գլուխ են խոնարհեցնում ազգային անմահ գաղափարի առաջ.... Անկախ ու ազատ Հայաստանից դուրս, նրա գոյութիւնից դուրս հայի համար չը կայ կեանք, չըկայ իմաստ: Հայը առանց Հայաստանի անհոգի է, մեռած է:[60]

Հետաքրքրականորեն, ինչպես Աղբալյանի խոսքերում էր անմխիթար իրականությունը հակադրվում անկախության բարձր արժեքին, այնպես էլ այս պատկերում ներկայացված իրականությունը կարծես ենթարկված լինի անկախության խորհրդանիշին: Դրոշը, կարծես իրականությունից վեր խոյանալով դեպի երկինք, միաժամանակ իր մեծադիր չափերի արդյունքում զբաղեցնում է նկարի օդային գրեթե ողջ տարածությունը: Պատկերի կոմպոզիցիոն այս լուծումը մի կողմից ի հայտ բերելով անկախության՝ կարծես «երկնային», հոգևոր արժեքի ըմբռնումն Առաջին հանրապետությունում, մյուս կողմից ազգային անկախությունն ակնհայտորեն օժտում է ժողովրդի համար օդին համարժեք մեծությամբ: Եվ պատահական չէ, ուրեմն, որ օրինակ՝ *Հառաջ* թերթում անկախությանը նվիրված հոդվածներից մեկում հեղինակը, հույս հայտնելով, որ հարկադրաբար հռչակված անկախության իրական արժեքն ի վերջո կպարզվի ապագայում, միաժամանակ հստակ էր, որ այն «ժողովրդի համար կդառնայ օդից աւելի կարևոր.... այն ժամանակ միայն կը գնահատուի բոլորի կողմից այս նշանաւոր օրը և սրբազան ջերմեռանդութեամբ նա (ժողովուրդը՝ Լ.Շ.) գլուխ կխոնարհի այս սերունդի առաջ...»:[61]

Հայտնի է, որ եռագույնը՝ որպես ազգային պետության դրոշ, առաջին անգամ բարձրացվել է 1918 թվականի օգոստոսի 1-ին, երբ Երևանում բացվել էր Առաջին հանրապետության խորհրդարանի առաջին նիստը: Հորիզոնական կարմիրի, կապույտի ու նարնջագույնի համադրությամբ կազմված եռագույն դրոշի այս տարբերակը, որը ներկայացված է նաև այս պատկերում և որը, ըստ պատմական աղբյուրների, առաջարկել էր հայագետ

---

[60] Յովհ. Ստեփանեան, «Մեր ամենամեծ տօնը», *Ժողովուրդ*, 28 մայիսի 1920 թ.:
[61] Ա. Գիւլխանդանեան, «Մայիսի 28-ի տօնը», *Հառաջ*, 28 մայիսի 1920 թ.:

Ստեփան Մալխասյանցը, Հայաստանի կառավարությունն ընդունել էր պետական խորհրդանշանների ստեղծման հրատապությունից ելնելով՝ հետագայում այն վերանայելու նախապայմանով: Սիմոն Վրացյանը, նշելով, որ «դրօշակն իր ամբողջութեան մէջ, գոյների ընտրութիւնն ու դասաւորութիւնը, աւելի շուտ արդիւնք էր քւեարկութեան պատահականութեան»,[62] այնուամենայնիվ, նկատում է, որ դրոշի հետ էին կապվում նաև ազգային գաղափարական որոշակի պատկերացումներ.

> Այդ գոյները, կարծես բխում էին մեր կեանքից, խորհրդանշում էին հայ պետականութեան ծագումն ու ապագան: Կարմիրը հայ ժողովրդի թափած արիւնն էր, կապոյտը՝ Հայաստանի կապոյտ երկինքը եւ նարնջի կամ ոսկու գոյնը՝ խտացումը աշխատանքի:[63]

Հայտնի է, որ ազգային դրոշի հաստատման շուրջ այս քննարկումներում դրոշի իր տարբերակն էր առաջադրել նաև նկարիչ Մարտիրոս Սարյանը՝ կազմված ծիածանը խորհրդանշող վեց՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, կապույտ և մանուշակագույն գույներից:



[62] Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 209:
[63] Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 209:

1919 թվականի հուլիսին Նոր Նախիջևանից հանրապետության երկրորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին ուղղված նամակում Սարյանի՝ ջրաներկով ներկայացված դրոշի տարբերակները հետաքրքրականորեն ելնում էին նկարչի այն ցանկությունից, որ ազգային պետության խորհրդանիշը մարմնավորեր նախևառաջ հայերի՝ որպես տեղի «արևելյան» ժողովրդին բնորոշող բազմերանգ գույները: Այս անկյան տակ իր վերապահումն անելով առհասարակ եռագույն դրոշների հանդեպ՝ Սարյանը նկատում է.

> Ընդհանրապես, եռագույն դրոշներ շատ կան և գոյություն ունի Դոնի Մեծն Բանակի կապտա-դեղնա-կարմիր դրոշը: Մեզ, որպես արևելյան ժողովրդի, իմ կարծիքով, շատ կսազի բազմերանգ դրոշը, ինչը որ ի հայտ է բերում գեղեցկագույն, հավերժ ծիածանը ինքնին:[64]

Եվ այդուհանդերձ նկարչի աչքում ծիածանը խորհրդանշող դրոշն ի հայտ էր բերում ոչ այնքան նորանկախ Հայաստանի գույները, որքան նկարչի՝ իր տանջված ու սիրված հայրենիքը վառ գույներով ամոքելու ցանկությունը: Եվ պատահական չէ, որ Սարյանն իր նամակն ավարտում է՝ միաժամանակ հույս հայտնելով Խատիսյանին, թե «Դուք անուշադրության չեք մատնի իմ դիտողությունները և Ձեր ուժերի ներածին չափով ծիածանով կկամարեք մեր տանջված և սիրված Հայրենիքը»:[65]

Գալով պատկերին, հարկ է նկատել, որ ինչպես ազգային անկախության գաղափարը սրբացնող՝ վերը հիշատակված հոդվածները, այնպես էլ այդ սրբազան գաղափարը նկարչական հարթություն բերած պատկերը, այդուհանդերձ, միանգամայն հակադիր էին անկախության գործնական ըմբռնումներին: Առաջին հանրապետությունում անկախությունը՝ իր ոչ գաղափարական, այլ գործնական կողմով բացահայտելու հնարավորություն է, օրինակ, 1919 թվականի մայիսի 28-ին *Աշխատանք* թերթում տպագրված «Անողոք պայքար» վերտառությամբ հոդվածը, որտեղ Առաջին հանրապետության հասարակական-քաղաքական գործիչներից Հմայակ Մանուկյանը նկատում է.

> Ու ահա այն անկախութիւնը, որ պէտք էր իբրև կենդանի մարմին և տարածական ոգի, վեր բարձրանար հայ աշխարհի բնագաւառներուն մէջ, այն անկախութիւնը, որ պէտք էր դառնար մեր մարմինէն անբաժան մաս, իբրև միս ու արիւն, տիրապետէր համակ մեր էութիւնը, այսօր, մէկ տարի ետք, իր տարեդարձի այս օրերուն ալ, կմախք մըն է սոսկ, խորշելի շատերուն համար:[66]

Անկախությունը, ուրեմն, հակառակ իր գաղափարական սրբացմանը, չուներ գործնական հենարաններ ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ ժողովրդական կյանքում: Ինչպես վկայում են աղբյուրները, անկախությունը «չէր մարսվել» ժողովրդական լայն խավերի կողմից և զուտ «անվանական» կամ «ձևական» բնույթ էր կրում:[67] Քաղաքական այս իրադրությունը հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի բնորոշմամբ հետևանք էր այն բանի, որ հայ քաղաքական միտքը նախկինում կայացել էր այն համոզմամբ, թե «Հայաստանը այնտեղ էր, Բարթողեան լեռնաշղթայի միւս կողմը,

---

[64] Մարտիրոս Սարյան, *Նամակներ*, հ. 1 (Երևան: Տիգրան Մեծ, 2002), էջ 218:
[65] Սարյան, *Նամակներ*, էջ 218:
[66] Հմ. Մանուկեան, «Անողոք պայքար», *Աշխատանք*, 28 մայիսի 1919 թ.:
[67] Այս առթիվ *Հորիզոն* թերթում կարդում ենք. «Ճշմարիտ է, ծանր է և նոյնիսկ «հայկական հանրապետութիւն» կամ նման մի անուն տալ այն լեռնոտ, չոր ու ցամաք և կղզիացած երկրամասնիկին, ուր մեր ժողովրդի մի մասնիկը դեռևս հնարաւորութիւն ունի պահպանելու իր ազատութիւնն ու անկախութիւնը: Բայց և այնպէս, պիտի հաշտւենք և այս մտքի հետ, ինչպէս ստիպւած եղանք հաշտւել մեր մեծ կորուստների և զոհաբերութիւնների հետ»: Տե՛ս «Մեր անելիքը», *Հորիզոն*, 6 հունիսի 1918 թ.:

հայկական հարց, Հայաստանի ինքնավարութիւն, հայ պետութիւն կարող էր լինել միայն Թիւրքահայաստանում...»:[68] Պատահական չէ, ուրեմն, որ Արևելահայաստանի տարածքում հռչակված Առաջին հանրապետությունը նախևառաջ կոչում էին «Արարատեան Հայաստան»: Ռուբեն Տեր-Մինասյանը, հղելով Առաջին հանրապետությանը, նկատում է. «Ներկայ Հայաստանը միայն մի գաւառն է Հայաստան Աշխարհի՝ Արարատեան Աշխարհի մի բեկորից կազմուած»:[69] Եվ թերևս տարածքային հենց այս կոնկրետությունն էր ուղենշում բացիկի ստորին ձախ հատվածում՝ քաղաքային համայնապատկերի հետնախորքին պայմանականորեն պատկերված Արարատը՝ խորհրդանշելով միաժամանակ դարերի ընդմիջումից հետո հայկական պետականության վերածնունդը հայկական պատմական հողերի միայն մի փոքրիկ կտորի վրա՝ «Արարատեան Հայաստանում»:[70] Պատահական չէ նաև, որ Արարատի պատկերումը հանդիպում ենք ոչ միայն հեռագրային բացիկների, այլև առհասարակ հանրապետության պետական խորհրդանշանների, ինչպես դրամանիշների ու նամականիշների, այնպես էլ զինանշանի գեղարվեստական ձևավորումներում:[71]

Ռազմաքաղաքական հանգամանքների բերումով իրողություն դարձած անկախությունը մասամբ ուղենշում էր նաև Օսմանյան կայսրությունում բարեփոխումների ու ինքնավարության երբեմնի քաղաքական բաղձանքների փոխակերպումը ազգային անկախության ու պետականության կայացման բարձր գաղափարներով: Առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին նկատում է.

---

[68] Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 289:
[69] Ռուբէն, *Հայ յեղափոխականի մը յիշատակները*, էջ 125:
[70] Այս առումով հետաքրքրական է հունիսի 5-ին *Մշակում* տպագրված «Հայկական անկախ իշխանութիւն» վերտառությամբ հոդվածը, որտեղ հեղինակը, միանգամայն քննադատական լույսի ներքո երևան հանելով նորանկախ պետականությանը տրված «Արարատեան Հայաստան» անվանումը, նկատում է. «մի քանի մտքեր այնքան առաջ են գնում նոյն իսկ, որ այդ հայկական անկախ իշխանութիւնը կնքել են «Արարատեան անկախ հանրապետութիւն» անունով, մոռանալով որ, աւաղ Արարատը ամբողջովին կցված է Թիւրքիային»: Տե՛ս Հ. Ա., «Հայկական անկախ իշխանութիւն»:
[71] Հետաքրքրական պետք է նկատել, որ ինչպես ազգային դրոշը, այնպես էլ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի կողմից նախագծված զինանշանը կառավարությունը հաստատել էր ժամանակավոր կերպով: Զինանշանը, այդուհանդերձ, լուրջ առարկությունների տեղիք էր տվել կառավարության ներսում, քանի որ ըստ քաղաքական որոշ ղեկավարների՝ այն, վերարտադրելով «հին, անցած դարերի աւատապետական գաղափարները», չէր համապատասխանում նաև Առաջին հանրապետության «պարզ, ռամկավար, յառաջադէմ ոգուն»: Սիմոն Վրացյանը գրում էր. «Ուրիշները գտնում էին շատ ծանր, ահեղ, աշխարհակալական, միապետական ձգտումների արտայայտիչ: Կային մարդիկ էլ, որոնք նոյնիսկ պատմական ճշտութեան հակասող փաստեր էին գտնում զինանշանի մէջ.... Եւ, վերջապէս, զինանշանը չէր գոհացնում մարդկանց գեղասիրական ճաշակին. իր մէջ պարունակում էր շատ կենդանիներ. «կատարեալ գազանանոց» սրախօսում էին ոմանք: Բայց եւ այնպէս կառավարութիւնը հաստատեց ներկայացուած նախագիծը, որովհետեւ պատմական կամ գեղագիտական ուսումնասիրութիւններ անելու ժամանակ չկար»: Տե՛ս Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 488-489:

> Իրերի բերմամբ, Հայաստանը վերաշինւում է Երևանից և ոչ Կարինից կամ Մուշից... Մի՞թէ սա պատճառ է, որ այդ վերաշինումը լինի մեզ համար պակաս սիրելի, պակաս ցանկալի, պակաս ոգեւորիչ.... Այսօր Հայաստանի Հանրապետութիւնն է, ուր մենք պէտք է որոնենք և գտնենք մեր փրկութիւնը, մեր դարաւոր տենչերի իրագործումը:[72]

Քաջազնունին այսպես, հայացքն ուղղելով արդեն իրողություն դարձած անկախ հանրապետության սահմաններին, այն տեսնում էր որպես հայության քաղաքական բաղձանքների կենսագործման գրավական: Ինչպես Քաջազնունին, այնպես էլ բացիկի նկարիչը կարծես սահմանազատել է Հայաստանի հանրապետությունը՝ պատկերի ձախ եզրով մեկ «գծված» դրոշակաձողով: Պատկերն ինքը, ավարտվելով հանրապետության սահմանագիծը հանդիսացող դրոշակաձողով, կարծես մարմնավորի վերը հիշատակված այն խոսքերը, թե Հայաստանից դուրս «հայի համար չը կայ կեանք, չըկայ իմաստ»:

Պատկերում առանցքային է նաև ստորին հատվածի կենտրոնում ստրկության շղթաները կոտրող տղամարդու կերպարը՝ մուրճը ձեռքին, աշխատավորի հասարակ հագուստով: Տղամարդու սոցիալական դասի այս հստակ ընդգծումը մի կողմից ի ցույց է դնում անկախության նվաճման հարցում հայ աշխատավորի առանցքային դերակատարությունը: *Հայաստանի աշխատաւոր* թերթում մայիսյան հերոսամարտերին անդրադարձող հոդվածներից մեկում հեղինակը հստակ էր, որ «դաշտեցին, հողի և մաճի զաւակներն» էին, որ «արթնացել էին վտանգի հանդէպ.... և, թողած հողն ու աշխատանքը, քայլում էին դէպի զօրաճակատ, որ իրենց աշխատանքը ոչ մի կրունկ տրորի»:[73] Մյուս կողմից, սակայն, պատկերում աշխատավորի կերպարը կարելի է դիտարկել քաղաքական առավել լայն հետագծում: Այս առումով հարկ է նկատել, որ Առաջին հանրապետության իշխանությունը ստանձնած Դաշնակցությունն ինքը նախևառաջ հայ աշխատավորական ներքնախավերի սոցիալական ազատագրման խնդիրների հետնախորքին առաջ եկած կուսակցություն էր: Այսպես Քաջազնունին հիշատակում է. «Դաշնակցութիւնը եղել է և մնում է հայ աշխատաւոր զանգվածների կուսակցութիւն»:[74] 19-րդ դարավերջին ձևավորված ազգային կուսակցությունները, այդ թվում՝ Դաշնակցությունը, ազգային ազատագրական իրենց խնդիրների ձևակերպման ընթացքին, մեծապես ազդված էին Ռուսաստանում սկիզբ առնող նարոդնիկական սոցիալիզմի ընդհանուր աշխարհայացքից:[75] Սակայն եթե ազգային ու միջազգային խնդիրների հատման

---

[72] «Քաջազնունիի պատմական մէկ ճառը խօսուած Նիւ Եօրքի միթինկին մէջ», *Ասպարէզ*, 23 դեկտեմբերի 1919 թ.:

[73] Շահինեան, «Հերոսական շաբաթը»: Սարդարապատը՝ իբրև թուրք ջարդարարների դեմ հայ աշխատավորական ներքնախավերի գոյապայքար է դիտարկում նաև Աշոտ Հովհաննիսյանը՝ Հարություն Թուրշյանի՝ *Սարդարապատի հերոսամարտը* աշխատության առաջաբանում՝ մասնավորապես նկատելով. «Եթե ոչ իր սոցիալ-դասակարգային բովանդակությամբ ու նպատակամղումով, գեթ իր ռազմական ու քաղաքական օբյեկտիվ նշանակությամբ, Սարդարապատի ճակատամարտը ընդառաջում էր և միաձուլվում հեղափոխական այն պայքարի հետ, որ մեծ Հոկտեմբերի դրոշի տակ նույն այդ պահին արծարծում էր Բաքվի հերոսական կոմունան՝ կյանքի ու մահու կռիվ մղելով թուրքական բանակի ու այդ բանակի հետև թաքնված անդրկովկասյան բլոկի հեղափոխական քաղաքականության դեմ»: Տե՛ս Հարություն Թուրշյան, *Սարդարապատի հերոսամարտը* (Երևան: Հայաստան, 1965), էջ 7:

[74] Հովհաննես Քաջազնունի, «Ի՞նչ պէտք է ըլլայ մեր ուղին», ըստ՝ Քաջազնունի, *Երկեր* (Երևան: Անի հիմնադրամ, 2018), էջ 61:

[75] Ավելորդ չէ նշել նաև, որ ՀՅԴ հիմնադիր անդամներից ոմանք նարոդնիկական հայացքների ազդեցության երբեմնի կրողներ էին: Աշոտ Հովհաննիսյանն իր՝ «Արևելահայերի մասնակցութիւնը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին» հոդվածում, լուսաբանելով հայ նարոդնիկ գործիչներից Վասիլի Շահվերդյանի և իր կնոջ՝ Մարիա Ալեքսանդրովնա Շահվերդովայի գործունեությունը, միաժամանակ նկատում է. «Վասիլ Շահվերդյանի և Մարիա Շահվերդովայի նարոդնիկական աշխատանքը անհետևանք չի եղել նաև հայ շրջապատի համար: Շահվերդյանների ընտանիքում էր, որ Թիֆլիսում սովորելիս, պատանի Սիմոն Զավարյանին դիպել էր նարոդնիկական հայացքների անդրանիկ շորշոփը»: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան,

քաղաքական այս համատեքստում բոլշևիկյան հեղափոխությամբ նժարն առավելապես թեքվում էր սոցիալական բևեռի կողմ, ապա Առաջին հանրապետությունում սոցիալական խնդիրն ինքը ենթարկվում էր ազգային ազատության գաղափարին: Քաջազնունին գրում է.

> Քաղաքական ազատութիւնը հիմքն է ու անհրաժեշտ նախապայմանը բոլոր միւս ազատութիւնների: Եւ մի ընկերվարական կուսակցութիւն, որ կը յաջողի տալ հայ աշխատաւորութեան այդ հիմնական ազատութիւնը, շատ մեծ գործ կատարած կը լինի նոյն սօցիալիզմի յաղթութեան համար,- այնպիսի մեծ գործ, որի համար իրօք արժէ ապրել ու մեռնել:[76]

Սա է պատճառը, ուրեմն, որ, որքան էլ Առաջին հանրապետությունում առանցքային էր սոցիալական հարցի ընդգծումն ի դեմս աշխատավորի կերպարի, այնուամենայնիվ, պատկերում աշխատավորի ֆիգուրը կարծես երկրորդական տեղ զբաղեցնի ազգային ազատության բարձր գաղափարը մարմնավորող դրոշի մեծադիր չափերի համեմատ:

Հետաքրքրական պետք է նկատել նաև առաջին հայացքից աննկատ թվացող այն հանգամանքը, որ բացիկում արևածագը, կարծես հակառակ իր «բնական» տեղակայությանը, պատկերված է նկարի ձախ՝ արևմուտքն ուղենշող կողմում: Կոմպոզիցիոն այս լուծումը պատահական չէ, քանի որ պատկերում արևն իր կենսատու ճառագայթներով, խորհրդանշականորեն կապվում է Արևմուտքից սպասվող լուսավորական բարիքների հետ: *Ժողովուրդ* թերթում, օրինակ, կարդում ենք. «Մեզ համար արեւմուտքից է ծագում ազատութեան արշալոյսը, Եւրոպայից են գալիս լուսաւորութեան ջերմ շողերը»:[77] Նյութական անմխիթար պայմաններում եվրոպական լուսավորական արժեքները Առաջին հանրապետությունում, ուրեմն, նույնանում էին արևի՝ կարծես փրկչական կենսատու ուժի հետ:

Այսպես բարձրակետը, որին ձգտում էր Առաջին հանրապետությունը, քաղաքակիրթ արևմուտքն էր: Ո՞րն էր, սակայն, ազգային պետականության՝ քաղաքակիրթ արևմուտքի հետ կապվելու եղանակը: Այս առումով հարկ է ուշադրություն դարձնել բացիկում Առաջին հանրապետության մշակութային ու հնագիտական «հոգևոր մնացորդների» ներկայությանը հղող ու Հայաստանի երբեմնի քաղաքական ու մշակութային հզորությունը երևան հանող ատամնաձև աշտարակներով ամրոցային շինությանը: Հայերի՝ հոգևոր մշակութային արժեքների կրող լինելու փաստագրումը պատկերում միտված էր նախևառաջ հայերին՝ քաղաքական մեծ թատերաբեմում իբրև պատմականորեն մշակութային գործուն սուբյեկտ հանդես բերելուն: Արդի հայագիտության ակունքներում կանգնած գործիչներից, եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը նկատում է. «Ամէն ազգ պատմութեան մէջ իւր դրոշմն է թողնում, պատուաւոր տեղ բռնում իւր ընկերների շարքում, վերջ ի վերջոյ, ոչ իւր արտաքին քաղաքական զօրութեամբ,

---

«Արևելահայերի մասնակցութիւնը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին», *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 1, 1968, էջ 27:

[76] Քաջազնունի, *Երկեր*, էջ 69: Այս առթիվ հետաքրքրական է նաև Առաջին հանրապետությունում աշխատավորության մայիսմեկյան տոնի առթիվ *Աշխատանք* թերթում տպագրված «Մայիսի 1-ը» հոդվածը, որտեղ հեղինակ Հմայակ Մանուկյանը, դասակարգային պայքարի գաղափարը ենթարկեցնելով ազգային պետականության բարձր գաղափարին, գրում էր. «Առանց Հայաստանի և ո՛չ մէկ տօն, առանց հայ ժողովուրդի և ո՛չ մէկ գաղափար.... Նախ Հայաստան և յետոյ մայիս 1-ը, նախ հայ պետական ամուր անկախութիւն և ապա դասակարգային պայքար, նախ ապրելու անկախ իրաւունք և ապա կռիվ համամարդկային իրաւակարգի համար: Ահա թէ ինչպէս պէտք է տօնէ, այսօր, մայիս 1-ը, հայ աշխատաւորութիւնը»: Տե՛ս Հմայակ Մանուկեան, «Մայիսի 1-ը», *Աշխատանք*, 1 մայիսի 1919 թ.:

[77] «Կոչ հայ ժողովուրդին», *Ժողովուրդ*, 28 մայիսի 1920 թ.:

աշխարհակալութեամբ, այլ հոգևոր ստեղծագործութեամբ»:[78] Քաղաքական այս պատկերացումների հիմքում իր հերթին ընկած էր այն համոզումը, որ անցյալի մշակութային արժեքները, իբրև քաղաքակիրթ ազգի ցուցիչ հանդես գալով ու գրավական դառնալով հայերի՝ լուսավոր արևմուտքում սեփական տեղն ունենալու, միաժամանակ ճանապարհ էին հարթում նրանց քաղաքական անկախության ամրապնդման առջև: Գարեգին Լևոնյանն, օրինակ, անցյալի հնագիտական հուշարձանները կարևորելով հատկապես ներկայի համար, այդուհանդերձ, դրանք արժևորում էր ոչ թե մշակութային, այլ քաղաքական հեռանկարների տեսանկյունից.

> Օտար ազգերը եթէ այսօր որոշ համակրութիւն ունեն դէպի հայի հայրենիքը, եթէ հայ դատը պաշտպանում են լուսաւոր ազգեր ու ժողովուրդներ, ցանկանալով վերաստեղծել ինքնուրոյն Հայաստան, այդ մեծ չափով շնորհիւ այն պատմական-կուլտուրական արժէքների, որ մեր պապերը թողել են մեզ, և այսօր մենք պարծենում ենք նրանցով:[79]

Սեփական մշակութային արժեքների յուրացմամբ արդի քաղաքական ինքնություն ձևավորելու այս իրողությունը իր մտավոր ակունքներն ուներ 19-րդ դարի արդի հայ լուսավորական նախագծերում, երբ պետության բացակայության պայմաններում մշակույթն էր ազգի՝ որպես ինքնուրույն հավաքականության գրավականը: Պետության գոյության պայմաններում, այդուհանդերձ, մշակույթը գերարժևորելու թե՛ Լևոնյանի և թե՛ Հովսեփյանի մոտեցումները, կարծես, քողարկում էին պետության կայացման գործում իրական՝ տնտեսական ու ռազմական կարողությունների դերն ու նշանակությունը: Եվ պատահական չէ, որ Լևոնյանը իր մեկ այլ հոդվածում արդեն գրում էր, թե մշակութային կյանքը «լուսաւոր ազգերի առաջ աւելի պարծանքով կը կարողանանք ցուցադրել, քան մեր զինուորական ոյժերի քանակը, քան մեր երկրի արդիւնաբերութիւնը»:[80]

Վերջաբանի փոխարեն

Առաջին հանրապետության քաղաքական ղեկավարները, թեև գործադրված ջանքերին, պետությանը վրա հասած սոցիալ-տնտեսական ու քաղաքական լրջագույն մարտահրավերների համատեքստում մի իմաստով անկարող եղան հրատապության ռեժիմում ժողովրդի բարեկեցությունն ապահովելու: 1920 թվականի աշնանը սկսված հայ-թուրքական պատերազմն իր հերթին երկրում ավերի ու քայքայման, սովի ու քաղցի հետևանք էր դարձել՝ պատճառ դառնալով միաժամանակ Հայաստանի խորհրդայնացման: Այսպես, Առաջին հանրապետությունն անկում ապրեց 1920 թվականի նոյեմբերի 29-ին, երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգերը: Հաստատվելով ազգամիջյան բախումների արդյունքում երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական, ըստ էության, քայքայված իրադրության հետևախորքին՝ խորհրդային կարգերը նշանավորվեցին միաժամանակ Հայաստանում քաղաքական կայունության ու ժողովրդի առօրյա խաղաղ աշխատանքի կայացման հնարավորությամբ: Որքան էլ Առաջին հանրապետության քաղաքական ղեկավարների աչքում Հայաստանի խորհրդայնացումը մարմնավորում էր ինքնուրույն պետականության ու ազգային անկախության իրենց օրակարգի կորուստը,

[78] Գարեգին եպիսկոպոս, «Հայրենի հնութեանց պահպանութիւն», *Էջմիածին*, 1920, թիվ 11, էջ 168:
[79] Գ. Լեւոնեան, «Կուլտուրական գործունէութիւն Հայաստանում», *Մշակ*, 22 փետրվարի 1919 թ.:
[80] Գ. Լեւոնեան, «Կուլտուրական գործունէութիւն Հայաստանում», *Մշակ*, 16 մարտի 1919 թ.:

այդուհանդերձ, հարկ է նկատել, որ ինչ-որ առումով Հայաստանի ապագա զարգացման վերաբերյալ նրանց հստակ դիրքորոշումն էր: Հովհաննես Քաջազնունին, օրինակ, նկատում էր.

> Փորձը ցույց տվեց, որ այժմ ևեթ անկախ պետություն կազմելը, մանավանդ քաղաքական այս աննպաստ պայմաններում, հայ ժողովրդի ուժերից վեր բան է: Պետք է մի միջին դրություն, քաղաքական մի նախակրթարան՝ դաստիարակվելու, պետական կյանքին վարժվելու համար, ապա՝ մեծ ցնցումներից, կոտորածներից ու ավերումներից հետո պետք է հանգստություն՝ ուժեր հավաքելու ու կազմակերպվելու համար: Իրերի բերումով այդ շրջանը Հայաստանը պիտի անցնի բոլշևիկյան դրոշի տակ: Թո՛ղ այդպես լինի:[81]

Հայաստանի խորհրդայնացմամբ՝ ազգային կոմունիստ գործիչներն արդեն համաշխարհային մեծ քաղաքականությունների բեկբեկման ընթացքին հայ ժողովրդի բարեկեցության ու զարգացման խնդիրը կամրջում էին համաշխարհային կոմունիզմի հաստատման քաղաքական հեռանկարներին՝ այդպիսով Հայաստանի սոցիալական ու տնտեսական պայմանների բարեփոխումն իբրև գրավական տեսնելով հայ ժողովրդի իրական անկախության համար:

[81] Քաջազնունի, *Երկեր*, էջ 152: